ԺԵ. ՏԱՐԻ ԹԻՒ 4379 18/31 ՅՈՒԼԻՍ 1900 ԵՐԵՔՇԱԲԹԻ 5 ՐԷՊԻՒԼ ԱՒԷՐ 1318 ԺԵ. ՏԱՐԻ ԹԻՒ 4379

درعلیه‌ده غلطه‌ده (آرەولك) غزته‌سی اداره‌خانه‌سنه

ՊՈԼԻՍ Ղալաթիա, Նորատունկեան խան

Les annonces sont reçue
á la Direction du Journal "AREVELK„
Galata, CONSTANTINOPLE.

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառներու համար	տարեկան	140	Դր.
»	վեցամսեայ	70	»
»	եռամսեայ	40	»
Օտար երկիրներու համար	տարեկան	40	Ֆր.
»	վեցամսեայ	20	»

Դրամի փոխարէն փոստի փոլ կ'ընդունուի, 115 դրուշի փուլը 100 դրուշի հաշուով:

Տեղական թղթատարի ծախքը բաժանորդաց կը վերաբերի:

Ծանուցմանց համար պէտք է դիմել ուղղակի խմբագրատուն:

ՈՐԲԱՆՈՑԻ ՄԸ ՇՈՒՐՋԸ

Երկուք ու կէս տարի է հաստատուած է Մշոյ Առաքելոց վանքի որբանոցը: Նախորդ շաբթու, յունիս 21ին և 22ին, տարեկան հարցաքննութիւնները կատարուեցան: Աշակերտները բաւական յաջողակութիւն ցուցուցին: Իրենց ընթերցումն ու արտասանութիւնը մանաւոր ուշադրութեան արժանի է: Մեծ մասը այս որբերուն պահած է հայկական յստակ հնչումը և առոգանութիւնը, որոնք կը յիշեցնեն Երեւանի և Թիֆլիսի արտասանութիւնը՝ աւելի բնական վիճակի մէջ:

Առաջիկայ տարեշրջանին համար որբանոցը բաժնուած է երեք դասարաններու. առաջին, երկրորդ և երրորդ: Կան նաեւ 4-5 նոր ընդունուած որբեր, որ նախապատրաստական դասարանը կը կազմեն: Որբերուն ընդհանուր թիւն է 54, որոնցմէ 4ը թոշակաւոր են, մօտակայ գիւղերէն: Արդէն Հոգաբարձութեան օրով 45էն 50ի բարձրացաւ բուն պատսպարեալներուն թիւը:

Որբանոցը ունի երեք ուսուցիչ: Կըրթական ծրագիրը կը պարունակէ երկու դասընթացք, չորս տարիներու բաժնուած: — Մասնաւոր ուժ կը տրուի՝ որ սորվին հայերէն լեզուն, լաւ գրել կարդալ: Իրագիտական ծանօթութիւններ, գլխաւորապէս երկրագործական կեանքին հետ կապուած: Կրօնի դաս:

Այս շաբթու Պատրիարքարանէն հասած պաշտօնագիրներէն կ'իմանանք որ, Առաջն. Տեղապահ Բագրատ Մ. վարդապետի առաջարկութեան և թախանձանքին վրայ՝ Ս. Պատրիարք Հայրը՝ Նպաստից Յանձնաժողովին հետ խորհրդակցելով, որոշած են արհեստանոց մը բանալ Առաքելոց վանքին մէջ: Արհեստանոցի նախնական ծախքերուն համար 50 լիրա դրուած է Հոգաբարձութեան տրամադրութեան տակ: Արհեստանոցին և որբանոցին հինգ տարուան յարատեւ գոյութիւն մը ապահովցնելու համար, Պատրիարքարանը պահանջած է յատակագիծ մը կամ ծրագիր մը պատրաստել արհեստին գործադրութեան և ապագայ զարգացման համար: Այս տեսակ տեղեկագիր մը հասնելէ յետոյ, Նպաստից Յանձնաժողովը պիտի որոշէ յատկացուելիք դրամագլխին քանակութիւնը:

Արհեստանոցը առ այժմ մանուսագործութեան վերաբերեալ երեք մասնաճիւղեր պիտի բանայ կամաց կամաց և իրարու ետեւէ. պարզ կտաւագործութիւն, գօտեգործութիւն և մանուսագործութիւն: Ընտրուած արհեստը այս գաւառին համար գործնական օգուտներ կրնայ ունենալ: Եթէ յարատեւութիւն ըլլայ և գործը զօրաւոր ու պարկեշտ ձեռքերու մէջ մնայ, մեծ բարիք մը կ'ակնկալուի՝ բովանդակ գաւառին համար, որ իր կտաւը, գօտին և մանուսան՝ հեռաւոր քաղաքներէ կը գնէ, սուղ սուղ: Պատրիարքարանը կը պահանջէ որ 1. Արհեստանոցին յատկացուելիք դրամագլուխը մնայ անձեռնմխելի: 2. Շինուելիք ապրանքներուն վաճառումէն գոյացած շահը բարդուի դրամագլխին վրայ: Այս շահէն մէյմէկ պզտիկ դրամագլուխ կազմուի՝ տրուելու համար այն որբերուն՝ որ արհեստը սորվելէ յետոյ կը մեկնին:

Բոլոր այս առաջադրութիւնները արդարեւ գեղեցիկ են և կարելի է որբերու ապագային համար լաւատես ակնկալութեանց դուներ բանալ, խորհելով թէ երբ արհեստը անգամ մը հաստատուի գաւառին մէջ, պիտի գտնուին տեղացի վաճառականներ՝ որ օր մը ուզեն որբանոցին հասցուցած արհեստաւորները աշխատցընել՝ ի շահ իրենց սեփական դրամագլխին: Արդարեւ արհեստներու զարգացման պատմութեան մէջ կը տեսնուի որ՝ երկրի մը տնտեսական կեանքը՝ յաճախ այս տեսակ փոքրիկ և աննշան սկզբնաւորութեան մը վրայ հիմնուած է:

Սակայն տխուր փորձառութիւնը կը սորվեցնէ որ վերապահումներ ընենք այս կարգի ձեռնարկութեանց համար: Սպասենք որ տեղւոյն վրայ խնդիրը ա՛յնքան լրջօրէն հէնք առնուի՝ որքան կը յանձնարարէ Պատրիարքարանը: Մանաւանդ անձերու փոփոխութեանց մէջ, գործը ամէն նոր եկողի համար, նկատուի սկզբունքի խնդիր մը, ժողովրդի տնտեսական երջանկութեան ծառայող միջոց մը: Արդէն արհեստանոցին վարպետը Այնթապէն ճամբայ ելած է, Առաջն. Տեղապահի հրահանգին համաձայն: Օգնական մըն ալ ուզուած է Բաղէշէն կտաւագործութեան համար: Կը մնայ որ Հոգաբարձութիւնը շուտով պատրաստէ այն սենեակները՝ որ ուղղակի արհեստանոցին պիտի ծառայեն:

* * *

Քանի մը դիտողութիւն ալ որբերուն արդի վիճակին և իրենց ներքին կեանքին վրայ աւելորդ չըլլայ թերեւս: Որբերուն ուտելիքը աղէկ չէ ամենեւին: Չեմ ուզեր հոս զետեղել իրենց շաբաթական ճաշացուցակը՝ որ սննդարար նիւթերու տեսակէտով ողորմելի է:

Ամէնքն ալ դեղնած են ու տխուր: Վանքին վարչութիւնը՝ փոխ-վանահայր Տ. Յովհաննէս Ծ. վարդապետ Մուրատեանի ձեռքն է, որ որքան ալ ծանօթ է իբրեւ բարի և գործասէր եկեղեցական, սակայն ծերացած է և մեծ հաստատութեան մը պէտքերուն պատասխանելու բոլորովին անկարող: Ինքը քանիցս յայտարարած է իր անձնական տկարութիւնը և խնդրած որ իրեն օգնական մը տան: Այս պահանջին գոհացումը անհրաժեշտ է և կարծեմ Առաջ. Տեղապահը Բաղէշի վանքերէն ընտրելի վարդապետ մը ունի ձեռքին տակ:

Աշակերտներու ննջարանը հիմայ բաւական կանոնաւորուած է: Շինել տրուեցան 50 հատ փայտէ մահճակալներ, որոնք զետեղուած են երկու սրահներու մէջ: Հոգաբարձութիւնը կը խորհի ասոնց կցել երկու սենեակ ալ, որ ննջարանը ամէն տեսակ անպատեհութիւններէ զերծ մնայ:

Դիւրին է մտածել որ այս որբերէն իւրաքանչիւրին անձը ասկէ ետքը կարեւոր է, իբրեւ ապագայ արհեստաւոր և քաղաքացի: Անոնք այլեւս լոկ պատըսպարեալներ չեն, որ վաղը նորէն թողուին իրենց ճակատագրին: Այսպէս խորհելով, 50 քաղաքացիի ապագան պատրաստելու փափուկ գործին մէջ մտնող որ և է անձ, լրջօրէն և խղճմտութեամբ աշխատելու է:

Գ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Բ.

Տարրական դպրոցը, ուր ընդունւում են երկու սեռից աշակերտներ սկսած 7 տարեկանից, վեց տարւայ դասընթացք ունի: Առաջին և երկրորդ տարիները խառն են և հարց կայ յաջորդ տարին միացնել նաեւ երկրորդ տարւայ տղաներին ու աղջիկներին և այն ձեւով կազմել խառն դասարաններ: Առանց դժուարութեան չեղաւ երկու սեռից երախաների միացումը և հասարակութիւնը երկար ժամանակ դժգոհում էր, և առանց դժուարութեան չէ, որ խելօք ու լուսաւորուած մարդիկ յաջողեցնում են մի քիչ ընդարձակել այն շրջանը, ուր սահմանափակուած է թոյլ սեռը և համոզել ժողովրդին որ երկու սեռից երախաների միացումը կարող է ունենալ միայն գերազանց հետեւանքներ:

Աշակերտները 270 են: Թոշակը տարեկան 4 թուման է (20 րուբլի) աշակերտների բաւական մեծ մասը ձրի է ստանում կրթութիւն: 12 դասարան կայ, որոնցից երկուսը խառն է, 5ը աղջիկների, իսկ 5ը տղաների: Ուսման ուղղութիւնը կազմած է ներկայ մանկավարժութեան բոլորովին համապատասխան ձեւերով: Հիմակւայ տեսուչը, մի շատ կրթուած մարդ, իր ուսումը աւարտած է Բերլինում, դպրոցը կառավարում է հմուտ ձեռքով և աւանդում բնագիտութեան դասեր երեք բարձր տարիներում: Ուսուցիչները և ուսուցչուհիները թւով 12 են. և ոչ թէ իւրաքանչիւրը մի դասարան ունի կառավարելու, այլ մի կամ մի քանի առարկայ ուսուցանելու հերթով, զանազան դասարաններում: Սա իսկապէս շատ առաւել է եւրոպական մեթոդից, որը միայն մի ուսուցչի է յանձնում մի դասարան կառավարել, ուր նա երբեմն պիտի աւանդէ 8ից 9 առարկայ, որոնք նա չի կարող, հակառակ իր ցանկութեան՝ ուսումնասիրել իւրաքանչիւրը մասնաւորապէս, ինչպէս նա կ'անէր, եթէ ունենար միայն մինը կամ երկուսը:

Մեր Լիլաւայի դպրոցում, օրինակ, մի ուսուցիչ տալիս է հայոց լեզուի դասեր երկու ստորին տարիների չորս դասարաններում, մի ուրիշը սովորեցնում է թւաբանութիւն, երրորդը ընդհանուր պատմութիւն: Բաց ի այս, ընդհանուր զարգացման առարկաները, այսինքն՝ մայրենի լեզու, թւաբանութիւն, աշխարհագրութիւն, ձեռագործութիւն — տղաները երեք բարձր տարիների ընթացքում սովորում են նաեւ երեք օտար լեզու, երեքն էլ վաճառական դասի համար անհրաժեշտ՝ պարսկերէն, ռուսերէն և ֆրանսերէն: Ես ունիմ շաբաթական տասը դաս ֆրանսերէնից, տղաների երեք բարձր տարիներում: Իւրաքանչիւր ուսուցչի աւանդած դասերի քանակութիւնը միջին թւով շաբաթական 23ից 26 է: Դասեր լինում են ամենայն օր, նոյն իսկ հինգշաբթի օրերը: Բայց դրա փոխարէն դասերի տեւողութիւնը բաժանւած է շատ աւելի խելացի և մանկավարժութեան համապատասխան կերպով:

Առաջին տարին միայն 18 դաս ունի շաբաթական (օրական 3 դաս) և իւրաքանչիւր դասը տեւում է միայն կէս ժամ, 20 րոպէ դասամիջոցներով: Երկրորդ տարւանից սկսած դասերը տեւում են երեք քառորդ ժամ և ընդհատւում են 15 րոպէ դասամիջոցով: Ամառուայ առաւօտների մեր 4 երկար դասերը, ընդհատուած միայն կէս ժամ դասամիջոցով, չափազանց յոգնեցուցիչ են ուսուցիչների և աշակերտների համար, և ուսումը շատ աւելի կ'օգտէր, ես համոզուած եմ, եթէ ենթարկէր դասերի այս ռէժիմին—դասերի ամենաշատը երեք քառորդ ժամ տեւողութեամբ և կարճ դասամիջոցներով: Այս մեթոդը գործ է դրւում միացած բոլոր տեղերում՝ կոլլէժում, օրիորդաց գիմնազիայում (Ecole secondaire), և աւելի մեծ իրաւունքով պիտի գործադրուած լինի մեր տարրական դպրոցներում, ուր աշակերտները, որքան փոքր են, այնքան աւելի կարիք ունին դասամիջոցներում: Ի՛նչ նահատակութիւն է առաջին տարւոյ խեղճերի համար, որոնք գալիս են մանկապարտէզից, ուր կէս ժամ տեւող դասերը ընդհատւում են խաղերով, երգերով, մարմնամարզական քայլերով և որոնք պիտի երբեմն մնան անշարժ երկու երկար ժամ և լսեն ձանձրալի դասը: Ես ասում եմ ձանձրալի որովհետեւ դասերը նրանց այնպէս պիտի թւան մանկապարտէզի մէջ և եթէ օրական 6 ժամ դասի փոխարէն նրանց տային միմիայն կէսը, ընդհատելով իւրաքանչիւր ժամը մի դասամիջոցով, ես համոզուած եմ, որ հետեւանքները պակաս չեն լինի, և երախաները աւելի առողջ կը լինէին:

Դառնանք մեր Լիլաւայի դպրոցներին: Երկրորդ տարին ունի 20 դաս, երրորդը 22, չորրորդը 24, և միայն հինգերորդ և վեցերորդ տարիներն են, ուր աշակերտներ ունին օրական 5 դաս ամենաշատը, որից չի անցնում: Առաջին երկու տարիները ո՛չ դաս, և ո՛չ էլ գրաւոր պարապմունք ունին տունը կատարելու. երրորդ տարին միայն բանաւոր դասեր ունին տունը պատրաստելու. ապա երեք բարձր դասարաններին տրւում է խնդիրներ և դասեր քիչ քանակութեամբ:

Ամբողջ ուսուցչական խումբը, բաղկացած 10 ուսուցչից և 2 ուսուցչուհից, բոլոր ոյժով աշխատում է ուսմանը տալ մի խելացի և իսկապէս մանկավարժական ուղղութիւն:

Օտար լեզուները աւանդւում են դիտողական մեթոդով և առանց մայրենի լեզուի օգնութեան, բաց ի հազւադէպ բացատրութիւններից և երբ աշակերտները արդէն ունին մի նշանաւոր պաշար բառերի, գաղափարների և ոճերի: Այդ մեթոդը, որ աշխատում է երախային դնել այն վիճակի մէջ, որում նա գտնում էր իր սեփական լեզուն սովորելիս. և նա առարկայի անունը տալիս է անմիջապէս այն լեզւով, որը ցանկանում է սովորեցնել, ինչ որ առաջացնում է գերազանց հետեւանքներ:

Ահա շուտով երկու տարի կը լինի որ ես փորձում եմ ֆրանսերէնը այս կերպով, և իմ փոքրիկ աշակերտները կարողանում են թեթեւ խօսակցութիւն անել որոշ քանակութեամբ նիւթերի մասին—իրենց շրջապատող առարկաների, դասարանի և օրւայ աշխատանքների, տան, ժամանակի, եղանակների, հագուստների, արհեստների մասին, ևայլն: Դասագիրքը ամբողջապէս ֆրանսերէն է, և իսկապէս առանց քերականութեան դասեր չկան: Քերականութիւնը, ուղղագրութիւնը, սրանց կանոնները և բացառութիւնները. այս բոլորը սովորում են խօսակցութիւնների ընթացքում: Աշակերտները ի հարկէ գրում են և իւրաքանչիւր խօսակցութիւն ամփոփում է մի փոքրիկ պատմութեան մէջ, որը հետզհետէ դառնում է երկար և բարդ, նայելով թէ որքան երախաները հետզհետէ տիրապետում են լեզւին: Ես համոզւած եմ որ մի այդպիսի մեթոդ, եթէ շարունակուի 4 կամ 5 տարի, աշակերտներին կը հասցնի այնտեղ, որ վարժ կ'արտայայտեն իրենց մտքերը իւրաքանչիւր օտար լեզւով, և շատ աւելի լաւ, քան անում են այս օրւայ թշւառ աշակերտները, որոնց սպանում են թեմաների և թարգմանութիւնների միջոցով և անգիր անել տալով կանոններ և անհուն բառերի սիւնակներ, որոնք նրանց բոլորովին չեն հետաքրքրում, որովհետեւ ո՛չ մի յարաբերութիւն չունին կեանքի հետ, քանի որ նրանք համարեա երբեք առիթ չունին նրանց գործածելու մի սովորական խօսակցութեան մէջ:

Բոլոր միւս առարկաներն ալ ձգտում են նոյն նպատակին—ուսումից ստեղծել մի դուրեկան և ոչ թէ ձանձրալի բան և կրթել երախաներին՝ քայլ առ քայլ հետեւելով նրանց զարգացման: Աշակերտին գտնել տալ՝ ինչ որ ցանկանում են նրան սովրեցնել, որպէս զի սա դառնայ նրա հարստութիւնը, նրա սեփականութիւնը և որպէս զի նա բոլորովին չմոռանայ:

Շաբաթը մի անգամ և հերթով ուսուցիչներից մինը կամ միւսը իր առարկայից դաս է տալիս, որին ներկայ է լինում ամբողջ ուսուցչական խումբը: Ապա ժողովում են և մտերմաբար խօսում են այս դասի մասին: Նկատողութիւններ են լինում, դիտողութիւններ են անւում, հարցեր են տրւում, այդտեղից ծնւում է մի վէճ, որից լոյս է հոսում, մի վէճ պըտուղներով լի, որի մէջ ամէն մարդ սովորելու բան է գտնում, և այս դասերը աջակցում են դասաւանդութեան կատարելագործելուն, ցոյց տալով սխալները, պակասը. նոյնպէս լաւ բան, որից կարելի է օգուտ քաղել: Բաց ի այս, ընկերական հաւաքումներից կայ նաեւ իւրաքանչիւր շաբաթ մի մանկավարժական ժողով տեսչի նախագահութեամբ, ուր արծարծւում են բազմաթիւ ընդհանուր և մասնաւոր խնդիրներ, որոնք որ և է ձեւով կապ ունին ուսման հետ:

Հ. Տ. Պ.

ԹՈՔԱՏԻ ԳՈՐԾԵՐ

Առաջնորդ Հօր մեկնման մասին Արեւելքի քանի մը շաբաթ առաջ հաղորդած լուրը կանխահաս էր թէեւ, բայց այդ օրերը այնքան պատրաստութիւններ կը կատարուէին մեկնելու որ, օրաթերթը իրականութիւնը միայն գրած կրնար նկատուիլ: Ամիս մը առաջ, երկու քահանայէ և երեք աշխարհականէ բաղկացած պատգամաւորութիւն մը փութացած էին զրկել Սեբաստացիները, ընդհուպ իրենց պատկառելի Հայրը Սեբաստիա առաջնորդելու համար: Ընդփոյթ մեկնման այն ըղձանքը զոր ունէր պատգամաւորութիւնը, կ'ենթադրէր թէ Սեբաստացիները շատ անհանգիստ եղած էին Տ. Պետրոս Սրբազանի բացակայութեան և թէ եռանդ մը ունէին իրենց սիրելի Առաջնորդը ժամանակ առաջ իր աթոռին վրայ բազմած տեսնելու, անտեսելով որ Թոգատցիներն ալ Սրբազան Հօր զաւակներն ըլլալով, նոյնքան իրաւունք ունէին վայելելու անոր անձկալի ներկայութիւնը: Մօտէն կրցայ ծանօթութիւն ունենալ պատգամաւոր քահանաներու հետ—Տ. Գրիգորիս և Տ. Կրօնիդէս—, մտքի ու սրտի զուգորդ զարգացումով տոգորուած, անկեղծութեան ու համբոյր վարմունքի բարեմասնութիւններով և ժողովրդին օգտակար դառնալու գովելի առաջադրութեամբ օժտուած, իրենց պաշտօնի գիտակից քահանաներ գտայ ես զանոնք, և ա՛յն տպաւորութիւնը կրեցի անոնցմէ, ինչ որ կը կրէ անապատի կիզիչ տապէն կոշկոճուած մէկը՝ երբ ովասիս մը զովութիւնը կ'ըմբոշխնէ: Քանի քանի թախանձագին խնդրանքներ ներկայացուցան Սրբազան Հօր՝ զանոնք տեղս թողելու համար, բայց անլսելի մնացին բնականաբար: Աշխարհական պատգամաւորներն ալ, ժողովրդին բարի երախտաւորներէն համակրելի անձնաւորութիւններ էին:

Ի՛նչ փոյթ սակայն պատգամաւորութեան արտորանքը: Թոգատցին այդքան շատ չեն կրնար բաժնուիլ ծերունազարդ և անձնդիր հովիւէն: Վերջապէս կրցանք պատգամաւորութեան աճապարանքի թափը կոտրատել և զայն ամիս մը սպասելու համակամել: Եւ ինչու չէ, այդպէսով ծննդավայրակիցներս չա՛տ բան շահեցան:

Մեկնումի օրը, Ազգ. առաջնորդարանը լեցուած էր պաշտօնական և անպաշտօն անձերով: Հո՛ն նկատելի էր պատգամաւորներու հրճուանքի և տեղացիներու տրտմութեան հակապատկերը: Սրբազան Հայրը դուրս ելաւ, բոլորակուած ժողովականներով, և սանդուխին ստորոտը յորդորական մը կարդաց Ազգ. պաշտօնական մարմնոյն. այս վերջիններու բազմաշոյլ պարտաւորութեանց շարքը ներկայացնելէ վերջ, մասնաւորաբար շեշտեց ա՛յն պարտքը զոր ունին անոնք տղոց դաստիարակութիւնը լուրջ ու խղճամիտ հոգածութեան առարկայ ընելու մասին: Սրտի ու մտքի մշակման վերաբերմամբ, Սրբազան Հօր արտաբերած ազդու խօսքերը և գործերը կը յայտնեն անոր կրթասիրական գնահատելի եռանդը: Յուզարկ գացողներու մօտ տասնեակ մը կառքեր կը հետեւէին Սրբազան Հօր, մինչեւ երկու ժամ հեռաւորութեամբ ջաղացք մը, ուր աջահամբոյրներով ողջերթ մաղթեցինք Սրբազանին և իր յարակիցներուն:

Մեկնեցաւ Տ. Պետրոս Արքեպիսկոպոս, թողլով իր ետին գործունէութիւն մը՝ պտղաշատ և բեղմնաւոր: Ն. Սրբազնութիւնը իր ծեր երեւոյթին տակ պահեստի ունենալով թարմ ու անծերանալի կորով մը՝ յաջողեցաւ քաղաքս անցուցած իւրաքանչիւր օրը արդիւնաւորել տեղացւոց յառաջդիմութեան օժանդակող գործերով, որոնցմէ մէկը միայն պիտի յիշատակեմ:

Քաղաքիս կարեւորագոյն թաղերէն մէկուն մէջ տուն մը և պանդոկ մը կը վաճառուէր միասնաբար: Տանուտէրը, Մարիցա հանըմ, կ'ուզէր ազգին ծախել հազար վեց հարիւր ոսկիի, մինչ անդին ուրիշներ երկու հազար ոսկի կ'առաջարկէին իրեն: Բայց ինչպէս հայթայթել 1600 ոսկիի այդ խոշոր գումարը: Եկեղեցիներու զարդեղէններու հալումովը գոյացած գումարը 500ը չէր անցներ: Սրբազան Հօր անվիճելի ձեռնհասութիւնն էր որ լուծեց այդ գորդեան հանգոյցը: 600 ոսկիի կանխավճարով մը գնեց տունն ու պանդոկը և տանտէրն ալ երբեք չգժկամակեցաւ տալու մաս մը ապառիկով, խորապէս համոզուած ըլլալով թէ Սրբազան Հայրը պիտի կարողանայ յետամնաց պարտքը վճարել ո՛ և է կերպով: Այսպէս Թոգատի ազգային կալուածներու վրայ կը բարդուի այսօր, մեր ամենասիրելի Հօր շնորհիւ, հատ մըն ալ, որ այժմէն իսկ կ'երաշխաւորէ տարեկան հարիւր ոսկիէն աւելի հասոյթ մը, ուրկէ մեծապէս պիտի օգտուին ազգ. դպրոցը, տարեկան պիւտճէին յաւելումով: Հասկնելու համար այդ նոր կալուածին կարեւորութիւնը, չմոռնամ յիշել թէ, հիմա 2500 ոսկի վճարող կայ՝ եթէ Ազգը ուզէ ծախել:

Այս բաղդաւորութիւնը Սրբազանին կը պարտի Թոքատցին: Եթէ Ն. Սրբազնութիւնը ներկայ չգտնուէր՝ անկարելի պիտի ըլլար հնչուն դրամի վերածել եկեղեցիներու արծաթեղէնները, վասնզի ժողովուրդէն շատեր՝ սաստկապէս պիտի մաքառէին այդ ձեռնարկը վիժեցնելու համար: Եւ որովհետեւ հաւատաւոր ժողովուրդը կատարեալ վստահութիւն մը կը տածէ առաջնորդ Սրբազանին հանդէպ, ճիկ մ'անգամ չհանեց զարդեղէններու հալումին հակառակ, ի բաց առեալ քանի մը անձերէ, որոնք ալ այս կալուածին գնումէն ետք, ակնածախառն արտայայտութեամբ մը կ'ըսէին. «Շա՛տ շնորհակալ ենք Սրբազանէն, մենք սխալեր ենք:»

Անշահախնդրական ոգին, զոր ցոյց տուաւ Առաջնորդ Սրբազանը, աճեցուցած է ծննդավայրակիցներուս այն խոր պատկառանքը՝ զոր կը սնուցանէին Ն. Սրբազնութեան նկատմամբ: Ասկէ առաջ իւրաքանչիւր առաջնորդ, առնուազն տասը ոսկի ամսաթոշակ մը կ'առնէր,

—)(11)(—

ՄԱՔՍ ՆՈՐՏԱՈՒ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ.

ՍԻՐՈՅ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թող քննե՛ն, եթէ քննելու դիւրին մէջն են, այն սիրային միացումները որոնց, իր յատուկ շրջանակովը, կը տեսնենք ծնիլը, մեծնալը, ու մարուիլը դէպի ամուսնական երջանկութիւնը կամ դէպի անխորհրդաբար չփոթուն աղէտքները: Ընդհանուր կանոնով, գրեթէ պիտի հաստատեմ այդ schématique ընթացքը՝ մարդ մը, սեղանի դրացնութեան կամ պարերու քառեակին պարտաւորութիւններուն միջոցաւ, առիթը կ'ունենայ խօսակցելու քիչ մը ու բնականաբար վայելուչ կերպով մը, երիտասարդ աղջկան մը հետ: Այս վերջինը նախ միայն այդ անձէն առաջ եկած տպաւորութենէն գոհացում մը կը զգայ և զոր ընդհանրապէս շատ կը չափազանցէ յետոյ իր շողոքորթուած ունայնամտութիւնը և զինքը սիրելի ու շնորհալի մտքի տրամադրութեան մը մէջ կը փոխադրէ, որ իր կարգին սխալ բացատրուած է մարդուն անձնադովութենէն: Հիմա ալ դիպուածին գործը կը դադրի, ու բանաստեղծին թելադրութիւնը կը սկսի իրենը: Ան ու աղջիկը թեթեւ գրգռութիւն մը զգացած են. երեւակայութիւնն է որ առաջ կը բերէ զայն. յիշողութիւնը իրեն կը կոչէ բոլոր հռչակաւոր սիրային ամոլներու դէմքերը. բոլոր իրենց կարդացած քնարերգական քերթուածները, բոլոր սիրային նամակները ու բոլոր խոստովանանքները կը սկսին եռալ, ու բոլոր կը խռնուին գրչին տակ ու շրթունքներուն վրայ. հետզհետէ միշտ կը բարձրանան, կը խանդավառին, միշտ աւելի եռանդագին կը մխրճին խաղալու սկսուած տարփական դերին մէջ, ու վերջապէս կը մտնեն այն խորանին որ անտեսանելի գրագէտներու խումբ մը այդ զոյգին վրայ կը տարածէ ձեռքերը, օրհնելու համար զայն, այդ զոյգին զոր իրենք միայն հոն առաջնորդած են: Ճշմարտապէս, քիչ առնելէն, խիստ յաճախ կը պատահի որ Թէքլա իր Մաքսին դերը (Շիլլէրի Վալլէնշթայնին մէջ) տուած է բոլորովին անբաւական դերասանի մը, և փոխադարձաբար ու այն ատեն ուրիշ կատակերգութիւն մը կը սկսի, հաւասարապէս թելադրուած՝ բանաստեղծէ մը, ինչպէս մոլութեան տռամ մը կամ հրաժարումի ու վանքի մը մէջ մեկուսանալու ռոմանս մը: Բայց գրեթէ միշտ խընդիրը ձայնագրական սիրոյ մը վրայ է որուն մէջ մարդերը ու կիները, Ամերիկացի Էտիսընին հնդաւոր գործիքին պէս, կը կրկնեն խամաճիկներու ճերմակ թիթեղի ձայնով մը, այն խօսքերը զոր բանաստեղծը առաջուընէ թափած է իրենց մէջ:

Դուք ամէնքդ, սիրոյ Սոփեստներ, կիրքին նրբութիւններուն վերացումը ընողնե՛ր, ախտաբաններ մարդկային սիրտին, դուք մանրադննուած կացութիւններու, այլանդակ էակներու ու անլուր դէպքերու հնարիչնե՛ր, ի՞նչ ըրիք, ձեր յամառ պատմութիւններովը, մարդուն ամէնէն պարզ, ամէնէն ճշմարիտ ու ամէնէն զուարթ բնազդը: Ու ո՛րքան յանցաւոր եղած էք դուք մեզ ամենուս դէմ:

Գ.

ԼԱՒԱՏԵՍՈՒԹԻ՞ՒՆ ԹԷ ՅՈՌԵՏԵՍՈՒԹԻՒՆ

Բուրգերը աշխարհի հրաշալիքներէն նկատուած են, կամ Շամիրամի առկախ պարտէզները, կամ Հռոտոսի կոթողը: Աւելի մեծ հրաշալիք մը կը ճանչնամ ես զոր մարդկային միտքը մինչեւ այսօր յղացած ըլլայ. յոռետեսութիւնը:

Երկու տեսակ անկեղծ յոռետեսութիւն պէտք է որոշենք. գիտական յոռետեսութիւնը ու գործնական (pratique) յոռետեսութիւնը: Գիտական յոռետեսութիւնը երեւոյթին (phénoménal) ամբողջ աշխարհին մասին յախուռն քննադատութիւն մը ի գործ կը դնէ: Տիեզերքը կը յայտարարէ համոզումով, թշուառ ձախօրինուած մըն է, որ ստորին արհեստաւորի մը յոռի մէկ նախափորձէն ալ աղէկ չէ: Իր գոյութիւնը, նախ, ունի՞ նպատակ մը: Գլուխնին ցնցելով կը մնան ծանր ու կնճռոտ մեքենային առջեւ, ու պարապ տեղ իմաստ մը ու խելք մը կը փնտռեն անոր ապուշ կազմուածքին մէջ:

Եւ եթէ տիեզերքը, իր ամբողջութեամբը, իմացականութենէ ու յատակագիծէ զուրկ խառնակութիւն մըն է, իր զանազան մասերը կը հնազանդի՞ն գոնէ տրամաբանութեան ու օրէնքի մը:

Այդ ալ չէ: Անգութ դիպուած մը կը կառավարէ բնութիւնը և ինչ որ անոր մէջ ամէնէն շահեկան է մեզի համար, մարդկային կեանքը: Ո՛չ մէկ բարոյականութիւն չուղղեր մեծ ինչպէս նաեւ փոքր դէպքերուն գնացքը. չարը բարիէն աւելի յաճախ կը յաղթանակէ: Արհիման սանդալին ոտքը կը նետէ Որմիզդը ու անամօթաբար կը խնդայ երբ այս վերջինին որովայնը կը կոտրի: Այն ատեն ինչո՞ւ ուրեմն ասանկ աշխարհ մը գոյութիւն ունենայ: Ինչո՞ւ ուրեմն տեւէ անիկա: Աւելի խելացի ու աւելի բարոյական չէ՞ պիտի ըլլար եթէ նորէն մըղուէր իր առջի ոչինչին մէջ ուրկէ կը պընդեն թէ դուրս ելած է, — ինչ որ սակայն կը մնայ տակաւին ապացուցանել:

Թարգմ. Գ. Ե.

(Շարունակելի)

մինչ Տ. Պետրոս Արքեպիսկոպոս չընդունիր ո՛ և է գումար իբր ամսաթոշակ։ Այս մասին յաճախ կը խօսէր Սրբազանը, տեսակցութեան մը միջոցին. «Կ. Պոլսէն վերադառնալուս՝ ինծի ամսաթոշակ առաջարկեցին Թոգատցիները, բայց տեսնելով որ անդին քանի մը հարիւր ոսկի պարտք ունին՝ ըսի թէ պարտքերնիդ վճարեցէք, քանի որ ես ձեր հայրն եմ դրամը իմ քով մնացեր է կամ ձեր քով, տարբերութիւն չունի։»

*** Ասկէ քանի մը ամիսներ առաջ տեղս ժամանեց Տ. Եսայի Վրդ. միաբան Ս. Երուսաղէմի, իբր օգնական Առաջնորդ Ս. Հօր։ Ցիշեալ վարդապետը յառաջդիմութեան և գործունէութեան ընդունակ տրամադրութիւններ ունենալուն՝ կը յուսանք որ, Տ. Պետրոս Սրբազանի հովանաւորութեան տակ մարզուելով ժամանակ մը պիտի կրնայ օգտակար ըլլալ։

*** Ազգ. երկսեռ վարժարաններու տարեկան հարցաքննութիւնները տեղի ունեցան կանոնաւորապէս՝ գոհացուցիչ արդիւնքներ երեւան բերելով։ Սրբազան Հայրը, մեկնելէ առաջ, ներկայ գտնուեցաւ աղջկ. վարժարանի բարձրագոյն կարգին կրօնագիտութեան քննութեանը. գոհ մնաց աշակերտուհիներու յաջողակութենէն և օրհնեց զանոնք։

*** «Նիւ-Եորքի կեանքի ապահովագրական Ընկերութիւնը» գործակալութիւն մը հաստատեց տեղս, յանձին Պառնիկ էֆ. Տէրտէրեանի։ Տասնըհինգ չափ անձեր ապահովագրել տուած են իրենց կեանքը։ Առաջին անգամ է որ մուտ կը գտնէ քաղաքիս մէջ ապահովագրական գործառնութիւնը, բան մը որ նախաքայլը ընողին պատիւ կը բերէ։ Ցաջողութիւն կը մաղթենք այդ եռանդուն երիտասարդին։

Թօգատ Մ. Փ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Չինու դէպքեր

Բէքինէն ստոյգ և խելքի մօտ լուր մը չառնուիր տակաւին։ Մ. Նահանգաց և քիչ մըն ալ Լոնտոնի մէջ տեսնուած դիւրահաւանութիւնը թէեւ աղօտ յոյս մը կը ներշնչէր քաղաքական շրջանակներուն մէջ, սակայն երէկուան հեռագրին այն լուրը թէ Բէքինի ամերիկեան դեսպանին հեռագիրը կեղծ է, բնականաբար կասկածի տեղի չթողուր եւրոպական դեսպաններուն և օտարականներուն կացութեանը վրայ։ Եւրոպական վերջին թղթատարերով առնուած լրագիրներն ալ ստոյգ լուր մը չեն պարունակեր Բէքինէն։ Միայն ամերիկեան դեսպան Պ. Քոնկըրի յուլիս 4 թուական նամակը կայ զոր ամերիկեան Պրուքլին մարտանաւին հրամանատարը Չէ-Ֆուէն կը հաղորդէ յուլիս 21 թուական հեռագրով մը։ Այդ նամակին մէջ ըսուած է.

«Երկու շաբաթէ ի վեր է որ պաշարուած ենք Անգլիոյ դեսպանատան մէջ։ Չինական զինուորներու կողմէ ջարդուելու մեծ վտանգին տակ կը գտնուինք։ Ատոնք ամէն օր կը ռմբակոծեն դեսպանատունը։ Եթէ մեզի օգնութիւն կը ղրկուի, պէտք է շուտով գայ։ Քաղաքին մէջ կառավարութիւն չկայ, բացի չինական բանակը որ որոշած է սպաննել Բէքին գտնուող բոլոր օտարականները։ Օգնութեան ղրկուած զինուորները երբ քաղաք մտնեն բուռն ընդդիմութեան մը պիտի հանդիպին։»

Ինչպէս կ'երեւայ, այս նամակը այնչափ ապահովիչ չէ։ Տէյլի Մէյլ կ'իմանայ թէ բրիտանական դեսպանատունէն բնիկ պաշտօնեայ մը որ Բէքինէն փախած է, յայտարարեր է թէ իր մեկնած միջոցին Եւրոպացիներուն մեծ մասը մեռած էր և ողջ մնացածներուն վիճակն ալ յուսահատական։ Չինական կառավարութիւնը, սակայն, միշտ ապահովիչ լուրեր կուտայ օտարականներու վիճակին վրայ, մանաւանդ Լի-Հունկ-Չանկ որ Շանկայի իտալական ու Պելճիական հիւպատոսներուն ըսեր է թէ Չինական կառավարութիւնը զինուորներու հսկողութեամբ Թիէն-Չին պիտի ղրկէ օտար դեսպանները։ Միջազգային զինուորները, սպասելով որ Չինացիները ճշմարտութիւնը ըսեն, կը պատրաստուին Բէքին երթալ՝ ազատելու համար իրենց դեսպանները։ Թիէն-Չինէն հեռագիր մը ծանոյց արդէն թէ վաղը կամ միւս օրը պիտի սկսի յառաջխաղացութիւնը, թէեւ Լի-Հունկ-Չանկ ամէն ջանք կ'ընէ տարհամոզելու Տէրութիւնները։ Ցայտնի կ'երեւայ թէ Լի-Հունկ-Չանկ ժամանակ շահիլ կ'ուզէ՝ այսինքն թէ Բէքինի մէջ ու շուրջը գտնուած չինական զինուորներուն թիւը աւելնայ և իր կողմէ պատրաստուած Սեւ Դրօշակները ժամանակ ունենան Բէքին հասնելու։ Չինացի ծերունի դիւանագէտին այս հնարքը տղայական խաղ մը կը համարին եւրոպական լրագիրները՝ հանդէպ եւրոպական մեծ Տէրութեանց հաստատ որոշմանը։

ՉԻՆՈՒ ԳԱՒԱՌՆԵՐԸ

Չինական զինուորները անհետացած են Թիէն-Չինի շրջականերէն, բայց կ'ըսուի թէ այդ քաղաքին և Բէքինի միջատեղը ամրոցներ կը շինեն ու կը սպառազինեն. նոյն իսկ բօսներ կան թէ Չինացիները վառօդի գործարաններ ունին։ Ռուսերուն յանձնուած է ապահովել երկաթուղիի յարաբերութիւնները Թաքուի և Թիէն-Չինի միջատեղը։ Ծայրագոյն Արեւելքի ամէն կողմերը ռուսական զինուորներու շարժման լուրեր կը հաղորդուին, որոնք գրաւած են Լանկ-Շին։ Մեծ մտահոգութիւն կը տիրէ ռուսական այն փոքրաթիւ զօրախումբերու մասին որոնք կը պաշտպանեն Խարպինի երկաթուղիի աշխատութիւնները։ Այդ տեղը քաղաք մըն է Սունկարիի վրայ, ուր Ռուսիոյ Անդրսիպերեան երկաթուղին երկուքի պիտի բաժնուի՝ մէկ կողմէն դէպ ի Վլատիվոսթոք և միւսէն դէպ ի Բորթ-Արթուր։ Ցուլիսի սկիզբներէն ի վեր այդ զօրախումբերէն տեղեկութիւն չկայ։ Քուլճայի մէջ Ռուսերը Խազախներ ղրկած են պաշտպանելու իրենց հիւպատոսարանները։ Այդ կողմէն եթէ շարժում մը ծագի, ատիկայ ոչ թէ չինական այլ Թիւրքմէններու նոր շարժում մը պիտի ըլլայ, որոնք արդէն քանի մը անգամներ ապստամբած են Չինացիներուն դէմ։

—Չինու կեդրոնական և հարաւային նահանգներուն փոխարքաներուն և ժողովուրդին նկատմամբ բոլորովին հակասական լուրեր կան։ Մէկ կողմէ կը ծանուցուի թէ Չինացիները կ'ուզեն թորփիլներ դնել Եանկ-Չէի մէջ, բայց միւս կողմէ կ'ըսուի որ Չանկ-Չէ-Թունկ՝ Հանքէուի փոխարքան իր կառավարութեան թնդանօթներուն զանազան մասերը գետը նետել տուեր է։ Եանկ-Չէի համար միշտ մտահոգութիւն կը տիրէ։ Անգլիական լրագիրները Չէ-Ֆուէն առնուած հեռագրով մը կը ծանուցանեն թէ Սէյմուր ծովակալը թորփիլահալածով մը ճամբայ ելեր է Եանկ-Չէ գետը երթալու, ուր հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէ պաշտպանելու համար տեղւոյն նաւահանգիստները որոնք անմիջական յարձակումի ենթարկուելու վտանգին ենթարկուած կը նկատուին։

—Քանթոնէն կը հեռագրեն Տէյլի Թէլէկրաֆի թէ տեղւոյն փոխարքան յայտարարութիւն մը հրատարակեր է՝ ծանուցանելով բոլոր փոխարքաներուն և կառավարիչներուն՝ յարձակողականի և պաշտպանողականի պատրաստուելու համար։ Քանթոնի փոխարքան նաեւ ազդարարեր է անոնց որ եթէ կանխատեսութիւն չունենալնուն հետեւանքով Չինու ո և է մաս մը կորսնցնէ իր երկիրներէն՝ պատասխանատուութեան պիտի ենթարկուին։

—Քանթոնի փոխարքան, կ'ըսէ ուրիշ հեռագիր մը, որ օտարականներուն շատ թշնամի է, իր ցամաքային բանակին ու նաւատորմին թիւը կ'աւելցնէ։ Քուանկ-Շաօյի կառավարիչին միջոցաւ բողոքեց՝ այդ նաւահանգիստին մէջ չորս թնդանօթակիրներ գտնուելուն դէմ, որոնց երկուքը Ֆրանսական են, մէկը՝ ամերիկեան և միւսը՝ անգլիական։ Փոխարքան կը բաղձայ որ ատոնք Պոկուէի ամրոցներէն անդին խարսխեն։ Չինական թնդանօթակիրները՝ Շամինի ետին խարսխած են. տասնեւութ ուրիշ թնդանօթակիրներ կայսերական քարափին մօտ կեցած հրամանի կը սպասեն։ Քանթոնի բնիկները հետզհետէ սպառնական ձեւ մը կ'առնեն։ Կացութիւնը տագնապալի է. առեւտուրը կեցած է։ Բորոտութիւնը և ժանտախտը մահեր կը պատճառեն։ Սեւ-Դրօշակներու պետը Քանթոն կը գտնուի։ Չինական թնդանօթակիրներուն նաւազները ատոնցմէ կը բաղկանան։

—Հոնկ-Քոնկէն կը հեռագրեն Նիւ-Եորքի լրագիրներէն մէկին թէ տեղւոյն ամերիկեան հիւպատոսարանին առած տեղեկութեան նայելով Հայ-Նան կղզին կառավարիչը ծանուցեր է հիւպատոսներուն թէ իրեն համար անկարելի է երկար ատեն պաշտպանել օտարականները։ Ամերիկացի միսիոնարները կոչում ըրեր են Հոնկ Քոնկի ամերիկեան հիւպատոսին, որպէս զի մարտանաւ մը ղրկէ Հայ-Նան։ Կը կարծուի թէ չինացի զինուորները սպաննած ըլլան Նատոայի միսիոնարները։ Բարիզի լրագիրները կ'առաջարկեն որ հոն աւելի Ֆրանսայի անկ է միջամտել, վասն զի այդ կղզին Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ կը գտնուի։

ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պէրլինէն կը հեռագրեն չորեքշաբթի օրուան թուականով.—Զանազան դաշնակիցներու միջեւ կարծեաց փոխանակութիւններ կը կատարուին փութով։ Դաշնակիցները ստոյգ կը նկատեն թէ Բէքինի օտար դեսպանները ողջ առողջ են և թէ չինական կառավարութիւնը կ'ուզէ զանոնք իբրեւ պատանդ վար դնել, ուզելով այդպէս թեթեւցնել իր վրայ ծանրացող անհատական, դրամական ու զինուորական պատասխանատուութիւնները։ Եւրոպական դաշնակիցները նաեւ այնպէս կ'ենթադրեն թէ Չինու կառավարութիւնը, թող չտալով որ օտար դեսպանները հաղորդակցին իրենց տէրութիւններուն հետ, կը յուսայ լաւագոյն պայմաններ ձեռք բերել, վասն զի այդ պարագային մէջ բանակցութեանց պահուն դեսպանները պիտի չկրնան Չինու կառավարութեան մեղսակցութիւնը հաստատող ապացոյցներ ներկայացնել։ Ինչ որ ալ ըլլայ, միջազգային զինուորներու դէպի Բէքին յառաջխաղացութիւնը օգոստոս 1ին (վաղը) պիտի սկսի։ Եւրոպական զինուորները կարելի եղածին չափ պիտի հետեւին Թիէն-Չինէն Բէքին տանող երկաթուղիի գիծը։

—Մ. Նահանգները միշտ կ'աշխատին որ նուազ զբաղին չինական գործերով, մինչեւ որ կատարուի նախագահական ընտրութիւնը (Նոյեմբերին)։ Ուաշինկթընէն կը հեռագրեն թէ հոն միջնորդութիւն մը հնարաւոր կը նկատուի, վասն զի այնպէս կը կարծուի թէ շատ դժուար պիտի ըլլայ ձեռք բերել հաւանութիւնը բոլոր այն տէրութեանց որոնց հպատակները Բէքինի մէջ վտանգուած են թէ՛ իրենց կեանքով և թէ ինչքով։ Կ'ըսուի որ Մ. Նահանգները եթէ չյաջողին համոզել Տէրութիւնները որ ներողամտութեամբ վարուին Չինու հանդէպ, Մ. Նահանգները պիտի չշարունակեն թըշնամութիւնները և իրենց գործերով պիտի զբաղին։ Մ. Նահանգները պիտի բաժնուին տէրութեանց հաւաքական գործողութենէն, յաւելցնելով միանգամայն թէ թող պիտի չտան որ Չինու մէջ իրենց շահերը վնասուին՝ միւս Տէրութեանց ընթացքին հետեւանքով։

—Ամերիկեան Քէմփ ծովակալը ղըրկեց Թաքուի ճակատամարտին տեղեկագիրը, ուր ըսուած է թէ Չինացիները եթէ յարձակած չըլլային, Ամերիկացիները պիտի չմասնակցէին Թաքուի ամրոցներուն ռմբակոծութեանը։ Մ. Նահանգաց ծովային նախարարը կը հաւանի Քէմփ ծովակալին ընթացքին։

—Եօքոհամայէն կը հեռագրեն չորեքշաբթի օրուան թուականով.—Ճարոնական Ասահի լրագիրը նկատելով որ Քորէայի մէջ շփոթութիւն մը հաւանական է՝ Մանչուրիոյ մօտ ըլլալուն համար, և նկատելով որ այդ տեղը Ճարոն կարեւոր շահեր ունի, կը ջատագովէ Ռուսիոյ հետ համաձայնութիւն մը որով Ճարոն պիտի կրնայ զինուոր ղրկել Չին։ Սէուլէն եւ Չէմուլբոյէն առնուած հեռագիրներ՝ երեքշաբթի օրուան թուականով՝ կը ծանուցանեն թէ Օթունկի մէջ Չինացիները 80 ռուս զինուորներ սպաններ են, մինչդեռ ռուսական ուրիշ 20 զինուորներ Եալու գետը անցեր և Վիճու ապաստաներ են։ Բորթ-Արթուրէն Բեանկ-Եանկ գացող 50 Ռուսներ յաղթուեր են Չինացիներուն կողմէ և կիրակի օրը Վիճու հասեր են։ Ռուսական պաշտօնեաները Սէուլէն ճամբայ ելեր են դէպ ի Բեանկ-Եանկ։

ԼԻ – ՀՈՒՆԿ – ՉԱՆԿ

Շանկայէն կը հեռագրեն թէ Լի-Հունկ-Չանկ ամէն օր հետզհետէ բազմաթիւ ազգականներէ և բարեկամներէ կը շրջապատուի։ Հիմա կը բնակի Լիուի տանը մէջ. այս վերջինը անցեալ տարի մայր կայսրուհիին կողմէ մասնաւոր և գաղտնի պաշտօնով Ճարոն ղրկուած էր։ Ստոյգ աղբիւրէ լուր կը տրուի թէ Լի-Հունկ-Չանկ գաղտնի հրահանգ ստացեր է առայժմ Շանկայ մնալու և բանակցելու տէրութեանց հետ, որպէս զի ետ կենան Բէքինի վրայ քալելու գաղափարէն։ Լի-Հունկ-Չանկ սակայն դժուարութեան կը հանդիպի, վասն զի Շանկայի օտար հիւպատոսները կ'ուզեն ո և է բանակցութեան մտնելէ առաջ համոզուիլ թէ Բէքինի օտար դեսպանները ողջ առողջ են։

ՉԻՆ ԵՒ ՃԱՐՈՆ

Ճարոնի արտաքին գործոց նախարարութիւնը միշտ կը բանակցի Չինու հարաւային նահանգներուն փոխարքաներուն հետ, մանաւանդ Թիէն-Չինի գրաւումէն ի վեր. կը հրաւիրէ զանոնք զինուորներ շարժման վիճակի մէջ դնել, որպէս զի միջազգային զինուորներուն աջակցին բարեկարգութիւնը վերահաստատելու համար։ Փոխարքաները կը վարանին այդ պատասխանատուութիւնը ստանձնելու։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Անգլիոյ Երեսփ. Ժողովին մէջ չորեքշաբթի օրը երկար ու կարեւոր վիճաբանութիւններ կատարուեցան՝ Թրանսվալի պատերազմին ծախքերուն համար խնդրուած յաւելուածական վարկին նկատմամբ։ Լոնտոնի երեսփոխան Պ. Պըքսթըն խստիւ քննադատեց կառավարութիւնը՝ Օռանժի բնակիչները և Բարեյուսոյ Գլուխին Աֆրիքանտէրները ապստամբի տեղ դրած ըլլալուն համար։ Սըր Ուիլֆրիտ Լօուսըն ըսաւ. «անհամար գանձ մը, քաջ և ազնիւ մարդեր և աշխարհի մէջ մեր ազդեցութիւնը և մեր դիրքը կորսնցուցինք։ (Բուռն բողոքներ։) Հիմա ի՞նչպէս պիտի կրնանք գլուխ ելլել Չինու ապստամբութեան հետ։ Պ. Չէմպըրլէնն առաջ Անգլիան ազատական գաղափարներու բարեկամ էր և տկարներուն պաշտպանը։ Հիմա ինկած է այդ բարձր դիրքէն և միայն տէրութեան գերակշռութեանը վրայ կը խորհի։ Պ. Չէմպըրլէն իր պաշտօնակիցներուն գլուխներուն և ուսերուն վրայ ելաւ, կարելի է ըսել իր մեղսակիցներուն, որպէս զի տիրապետէ այդ գարշելի և հականգլիական քաղաքականութիւնը։»

Պ. Էլլըթ պահանջելով կառավարութենէն որ շուտով ինքնօրէն կառավարութիւն մը հաստատուի հարաւային Ափրիկէի մէջ, ըսաւ.

«Ենթադրենք թէ պատերազմ մը ծագի Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ և թէ Ճէրսէյ կղզին Ֆրանսացիներուն ձեռքը իյնայ։ Պէտք է ընդունի՞նք որ Ֆրանսացիները այդ բրիտանական երկիրը ձեռք անցընելէ ետքը՝ ապստամբի տեղ դնեն անոնք որոնք իբրեւ թշնամի ներկայացած են իրենց դէմ։»

Պ. Չէմպըրլէն պատասխանելով բոլոր ընդդիմադիրներուն, ծափահարութիւններով ընդունեցաւ։ Պատասխանեց առաջարկութեան մը որով կը պահանջէր զեղչել իր թոշակը։

«Մեր սերունդին ամէնէն մեծ պատերազմը կը վարենք, ըսաւ Անգլիոյ գաղթային նախարարը։ Ահագին քանակութեամբ կեանք և դրամ զոհեցինք։ Կարելի չէ չէզոքութիւնը ընդունիլ պատերազմին քաղաքականութեանը, շարունակուելուն և արդիւնքին վրայ. պէտք է մէկ կամ միւս կողմին քուէ տալ։ Անբանական և անբարոյական վարդապետութիւն մըն է՝ ըսել թէ պատերազմը անիրաւ է ու ապօրէն և քուէարկել պատժելու համար զայն որ անմեղ է, միանգամայն քիչ մը բան տալով անոր որ յանցաւոր է։»

Պ. Չէմպըրլէն բացատրեց թէ ի՛նչ տարբերութիւն կայ հաւատարիմ և անհաւատարիմ Աֆրիքանտէրներուն միջեւ։ Նախարարը անսովոր կերպով ընդարձակեց իր ճառը. յարձակեցաւ Պօէրները պաշտպանողներուն վրայ. սահմանեց երկու հանրապետութեանց տրուելիք վարչական ձեւը և ըսաւ.

«Այդ երկու երկիրները Ն. Վեհափառութեան ինքնիշխանութիւնը պիտի ըլլան։ Ցառաջիկային համար քաղաքական ո և է անկախութիւն պիտի չունենան, բայց երբ խռովութիւնները հանդարտին, կարելի է որ այդ երկու երկիրներուն ինքնօրէն կառավարութիւն մը տրուի՝ երկուքին համար միեւնոյն աստիճանը չունենալու պայմանով։ Կարելի է Օռանժ առանձնաշնորհումներ ստանայ՝ Թրանսվալէն աւելի շատ. բայց զինուորական վարչութիւնը պիտի տեւէ մինչեւ այն ատեն որ ինքնօրէն կառավարութեան ձեւը կարելի ըլլայ ամբողջութեամբ գործադրել։»

Սըր Հէնրի Քէմպըլ Պէննըրմէնի և Սըր Էտուարտ Կրիի կողմէ տրուած պատասխաններէ ետքը կառավարութեան առաջարկութիւնները ստուար մեծամասնութեամբ ընդունուեցան այսինքն 52ի դէմ 208 ձայնով։

—Լորտ Ռոպէրթս յուլիս 24 թուականով Վան Տէր Մէրվէի կայարանէն սա հեռագիրը ուղղած է Անգլիոյ պատերազմական նախարարութեան.

«Այսօր քալեցինք Պրոնք-Հորթս-Սբրուիթի վրայ, այն տեղը, ուր 1880 դեկտեմբեր 20ին անգլիական հետեւակներու 49րդ զօրագունդը յարձակում մը կրած էր։ Այդ տեղը նոյն թուականին մեռնող սպաներուն և զինուորներուն գերեզմանները լաւ վիճակի մէջ էին։ Հիմա աւելի պիտի բարեկարգենք զանոնք։ Մեր յառաջխաղացութիւնը ընդդիմութեանց հանդիպեցաւ, բայց Ֆրէնչի հեծեալները եւ Հըթըրի թեթեւաշարժ հեծելազօրքերը մեր աջ կողմը մեծ շրջան մը կատարելով ետ մղեցին թշնամին, մեծ կորուստներ պատճառելով անոնց։ Շատ մը Պօէրներ մեր ձեռքը գերի ինկան. աւստրալիացի տեղակալ մը սպաննուեցաւ։ Պրոտուտ կը տեղեկագրէ թէ Վրետֆորթի մէջ Լիթըլ ժամանումին կը սպասէ։»

—Կրիլինկթաուէն կը հեռագրեն յուլիս 24 թուականով.—Բէյքի զօրավարը հոս վերադարձաւ։ Եզները շատ գէշ վիճակի մէջ են և երկար ճամբորդութեան չեն կրնար տոկալ, վասն զի կերի համար խոտ չունին, բայց ագարակներէն բաւական չոր խոտ կը գտնուի։ Եզներուն տեղ ջորի գործածել աւելի աղէկ պիտի ըլլայ։ Անգլիացիներուն անձնատուր եղած շատ մը Պօէրներ թշնամիին կողմէ ձերբակալուելով Մաչատոտորը տարուեցան։

—Տէվէթ Պօէր զօրավարը կ'երեւայ թէ միշտ լաւ տեղեկութիւն կ'առնէ, վասն զի վերջին անգամ անոր ձեռքը ինկած կառախումբին մէջ հարիւր հազար անգլիական ոսկի կար, բայց դժբաղդաբար այդ գումարը պարունակող վակոնին սռնակները տաքցած ըլլալով, կառախումբէն զատուած ու կայարան տարուած էր։

—Լոնտոնի լրագիրները Բարեյուսոյ Գլուխէն յուլիս 24 թուական հեռագիր մը կը հրատարակեն ծանուցանող թէ Ռէթիֆս-Նէքի դիրքը զոր անգլիական հետեւակներու երկու զօրագունդեր կը գրաւէին, Պօէրներու կողմէն յարձակում մը կրեր է և թէ սաստիկ ճակատամարտէ մը ետքը, Անգլիացիները պարտաւորուեր են նահանջել՝ 50 հոգի կորսնցնելով։

ՍԵՐՊԻԱ.—Պէլկրատէն կը հեռագրեն յուլիս 25 թուականով.—Նորակազմ նախարարութիւնը կը բաղկանայ այն տեսակ անձերէ որոնք հաստատապէս որոշած են արգիլել Միլան նախկին թագաւորին կողմէ ըլլալիք ո և է նոր միջամտութիւն՝ Սերպիոյ կառավարութեան և վարչութեան մէջ։ Թէեւ նոր նախարարապետ Նովաքովիչ մինչեւ հիմա դուրս կեցած է գործօն քաղաքականութենէ, սակայն կ'ըսուի թէ յառաջդիմական ռուսասէր մըն է։ Պատերազմական և հանրօգուտ շինութեան նախարարները երկու փայլուն սպաներ են՝ խիստ անձնուէր Ալեքսանտր թագաւորին։ Պ. Լ. Բոժովիչի ներքին գործոց նախարար անուանումը քիչ մը մտահոգութիւն պատճառած էր, վասն զի անցեալ տարուան զինուորական ատեանին նախագահն էր, բայց այդ նախարարը քանի որ նոյն ատեանին վճռով դատապարտուածներուն ներման գիրը ստորագրած է, այդ պարագան բաւական երաշխաւորութիւն մը կը նկատուի թէ նախորդ կառավարութեան օրով գործուած սխալները պիտի դարմանուին։ Կրօնական գործոց նախարար Պ. Բ. Մարինքովիչ որ փաստաբան և օրագրող է, ծանօթ է իր ռուսասէր զգացումներով. նախորդ նախարարութեան դէմ բուռն պայքար մը մղած է։ Գալով կրթական նախարար Պ. Միքա Բորովիչին, անիկա բաւական է հասկնալու նոր նախարարութեան հակումները։ Պ. Բորովիչ, որ Վուիչի արմատական դահլիճին մէջ պաշտօն վարած է, կուսակցապետներէն մէկն է արմատականներուն որոնք այնչափ խոշտանգուեցան Միլանի նախկին թագաւորին կառավարութեան կողմէ։

—Ալեքսանտր թագաւորը, ուրբաթ օրը, իր նշանածին հետ պտոյտ մը կատարեց բաց կառքով։

—Ալեքսանտր թագաւորը, Պէլկրատի ռուսական դեսպանատան գործակատարին միջոցաւ խնդրած է Նիքոլա Բ. կայսրէն որ բարեհաճի իր վկան ըլլալ՝ ամուսնութեանը առթիւ։ Ռուսիոյ Ալեքսանտր Բ. կայսրը կնքահայրն էր Ալեքսանտր թագաւորին։ Նաթալի թագուհին Պէլկրատ երթալով ներկայ պիտի գտնուի իր որդւոյն ամուսնութեանը։ Միլան նախկին թագաւորը բոլորովին ետ կեցած է Պէլկրատ երթալու գաղափարէն։ Պսակի խորհուրդը պիտի կատարէ Պէլկրատի մետրապոլիտը՝ մայր եկեղեցին մէջ։ Դեսպանական մարմինը ամբողջութեամբ ներկայ պիտի գտնուի։

—Պէլկրատէն պաշտօնապէս կը հերքուի Ալեքսանտր թագաւորին ամուսնութեանը առթիւ եղած զանազան հրատարակութիւնները։ Տիկին Տրակա Մաշին ծնած է 1867ին և հետեւաբար 33 տարեկան է. բնաւ զաւակ չէ ունեցած։ Ալեքսանտր թագաւորը հազարի չափ շնորհաւորական հեռագիրներ ստացաւ։

—Ռուսիոյ լրագիրները նպաստաւոր կերպով կը խօսին Սերպիոյ թագաւորին նշանուելուն վրայ։

ԳԱՐԱԳՈՐԿԷՎԻՉ իշխանը անցեալ շաբթու Ճէնովայէն ճամբայ ելեր է դէպ ի Չէթինէ։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ.—Գերմանիոյ և Վատիկանի միջեւ կատարուած բանակցութիւնները բաւական առաջացած են, Լէոն ԺԳ. Պապը պիտի հաւանի որ աստուածաբանութեան դասախօսութիւն մը հաստատուի Սթրազպուրկի համալսարանին մէջ. նաեւ մոնսէնեօռ Սամբուչէթթի որ հիմա Միւնիխի պապական ուիրակն է, միեւնոյն պաշտօնին պիտի կոչուի գերման կառավարութեան մօտ և պիտի բնակի Գերմանիոյ կեդրոնին կաթոլիկ քաղաքներէն մէկուն մէջ։ Պարոն Հէրթլինկ, Գերմանիոյ Երեսփ. Ժողովին կաթոլիկ կուսակցութեան պետերէն մէկը, որ շատ նպաստած է բանակցութեանց կանոնաւոր ընթանալուն, Վատիկանի գերման դեսպան պիտի կարգուի։

ՕԴԵՐՈՒ ՏԱՔՈՒԹԻՒՆԸ.—Վիեննայի մէջ ալ սաստիկ տաք կ'ընէ. տասը հոգի փողոցին մէջ յանկարծամահ եղեր են արեւազարկէ։

—Լոնտոնի մէջ անցեալ չորեքշաբթի ջերմաչափը 34 աստիճան ցոյց կու տար շուքին մէջ և 56 արեւին տակ։ Ցիսուն հոգի արեւազարկէ հիւանդացան։ Ձիերուն գլուխները փաթթէ գլխարկով կամ տերեւներով ծածկուած են։ Ցատուկ տեղեր հաստատուեցան արեւազարկէ բռնուած ձիերը դարմանելու համար։ Հանրակառքերու երթեւեկը խանգարուած է, վասն զի ձիերը կամ յանկարծամահ կ'ըլլան և կամ այն տեսակ ողբալի կացութեան մը կ'ենթարկուին որ հարկ կ'ըլլայ ուղեւորները դուրս հանել և կառքերը շուք տեղ մը տանիլ։ Քաղաքին ջուրի խնդիրն ալ մտահոգութիւն կը պատճառէ։

—Սպանիոյ մէջ ալ նոյն վիճակը կը տիրէ։ Մատրիտի մէջ չորեքշաբթի օրը ջերմաչափը 42 աստիճան ցոյց կու տար շուքի մէջ և Սէվիլէի մէջ՝ 43։

ՄԵՏԱՔՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Լիոնի Մօնիդէօռ տէ Սուա լրագրէն քաղուած.

Ազգ. Տօնին օրը հաշուի չառնելով, որ գործի դադարման օր մըն է, անցեալ եօթնեակը նախորդ շաբթուան չափ բեղուն չեղաւ։ Հրապարակին վրայ կան միայն ուշ մնացող գնորդներ, որոնք շատ փոքրաթիւ են և անհրաժեշտը միայն կը գնեն։ Ցանձնուելիք վաճառքներ կան անտարակոյս, բայց համոզուած ենք թէ ատոնք շատ մեծ բան մը չեն և հազիւ մէկ քառորդը կը կազմեն անցեալ տարի նոյն թուականին եղած գործառնութեանց։ Պէտք չէ մոռնալ թէ օրը օրին վաճառումներ միայն պիտի ըլլան հրապարակին վրայ, պատերազմին ամբողջ տեւողութեանը միջոցին։ Մէկ խօսքով այս շաբթու հրապարակը հանդարտ է, ինչ որ սովորական է յուլիս, օգոստոս և երբեմն սեպտեմբեր ամիսներուն մէջ։

Հակառակ մեր ունեցած յարգանքին հանդէպ պաշտօնական գինը որոշող յանձնաժողովին, հարկ կը զգանք իրեն դիտել տալու թէ այնպիսի գիներ կան, որոնք ո՛րքան ալ կանոնաւոր ըլլան, սխալի մը արդիւնքն են։

Ինչ որ կ'անցնի կը դառնայ կերպասի հրապարակին վրայ, միօրինակ ու նուազ քաջալերական է։ Չինու և Թրանսվալի պատերազմներն են որ առեւտրական գործերուն կը վնասեն Անգլիոյ մէջ։ Ամերիկայի մէջ ալ՝ Չինաստանի պատերազմը և նախագահական ընտրութիւնը, որով շատ կը զբաղի ժողովուրդը, և մանաւանդ մետաքսեղէններու առատութիւնը ծանրապէս կ'ազդեն հրապարակին վրայ։ Ֆրանսայի մէջ, Ցուցահանդէսը ոչ առաջ նպաստաւոր եղած է մեր մետաքսագործութեան և ոչ ալ վերջը պիտի ըլլայ և ալ աւելի գէշ ըլլալու կը սպառնայ։ Ինչպէս կը տեսնուի, գործերուն կացութիւնը փայլուն չէ բնաւ։ Այսու հանդերձ յուսանք թէ հոկտեմբեր ամիսը պիտի ցրուէ գործերու թուլութեան այս բոլոր պատճառները և առաջիկայ գարնան, որ ամէնէն բանուկ գործառնութեանց եղանակն է, ի փոխարէն մեծ թուով յանձնորարութիւններ պիտի ըլլան։

Ֆրանսական և իտալական հաւասար քանակութեամբ բժժական մետաքս կայ, բայց Պրուսայինը քիչ է ինչպէս նաեւ Սուրիականը։ Գալով գործուած մետաքսներուն՝ Չինու և Քանթոնի թեզաններուն համար միայն լաւ խնդրանք կայ։

Մարսիլիոյ մէջ ծախուեցաւ պատրաստ քանակութեամբ կամ յանձնելի յառաջիկային, 30,000 քիլօկրամ խոզակ, Ա ւելքի դէպին և ճերմակ տեսակէն, գին են 9,50 էն մինչեւ 11 ֆր.։ Կը շնորհա րենք մանրարան տիրոջ այդ քաջութիւ որ ամէնէն բարձր գինը տուած է։ որ ալ ըլլայ անկէ ձեռք բերելիք արդ դրութիւնը, շատ կը տարակուսինք կարենայ ամենափոքր շահ մը քաղել կէ։ Ուրիշ գնում չէ եղած Ֆրանսայի մէ

Ահաւասիկ գիները.

Պրուսայի տեսակ էքսթրա 9/11—10/12 11/13 47
— — — 14/16—18/22
— — Ա. կարգի 9/11—10/12 11/13 4
— Ա. — 14/16—18/22
— — Բ. — 9/11—10/12—11/15 42
— — Բ. — 14/16—18/22 4
Սուրիայի տեսակ Ա. կարգի 8/10 9/11
— — Ա. — 9/11—10/12

Մարսիլիոյ մէջ կը շարունակին մաս մը խոզակ ծախել հաստատ գնով, բայց բժժը այնպէս չէ և եղած պատրաստ ապրանքն ալ չի բաւեր։

Լոնտոնի հրապարակը հանդարտ է և գիներն ալ հաստատուն են։ Չինու խառ վութիւնները և արձակուրդի եղանակ գործերը անորոշութեան կը մատնեն, խիստ նուազեցնելով անոնց թիւը։ Գին ըը անուանական են։

Վերջին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.— Տիարպէքիրի հանգին Տիրէք գաւառակին գայմագա անուանուեցաւ Նասիպինի գայմագա Թէվֆիք էֆ. որուն յաջորդեց Տիր գայմագամ Հիւսամէտտին էֆ.։

—Իսլայի երկրորդ աստիճան ցաւ Սէլանիկի նահանգին տէֆթէրտա պաշտօնեայ Նուրուլլահ պէյ։

—Երկրորդ կարգի Մէճիտիէ պատուա նշան արուեցաւ Հանրային Պարտքի վա չութեան Իզմիրի տնօրէն Շէֆիք պէյի Պարսից Շահին բժիշկ Միրզա Մէհմ խանի։ Երրորդ կարգի Մէճիտիէ՝ Նաճ խանի, որդի Կ. Պոլսոյ պարսկական նա խորդ դեսպան Խաստուլլահ խանի։ Չոր րորդ կարգի Մէճիտիէ՝ Հայ-հռոմէական ներու մայրապետանոցին դեղագործ Հ քիմեան Ժոզէֆ էֆ.ի։

ՍԵՐՊԻՈՅ դեսպանը Սերպիոյ թագա ւորին շնորհակալութիւնները մատոյց Վե Սուլթանին՝ այն շնորհաւորական հեռա գրին համար զոր բարեհաճած էր ուղղե Ալեքսանտր թագաւորին նշանուելուն առթիւ։

ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ.— Շիրքէթի Խայրիէի վարչութիւնը որոշ 38 թիւ շոգենաւին փոքրադիր մ նմոյշը պատրաստելով Վեհ. Սուլթանին մատուցանել՝ Ն. Վեհափառութեան գա հակալութեան քսանըհինգերորդ տարե դարձին օրը։ Այդ նմոյշը որ 80 հարիւ րորդամէթր երկայնութիւն պիտի ունե նայ, ոսկիէ ու արծաթէ պիտի շինուի։ Վեհ. Սուլթանին անունը և կայս. Թուղ րան քանդակուած տեղը ադամանդներով րերով պիտի զարդարուին։ Այդ նմոյշին պատրաստութիւնը յանձնուած է ոսկե րիչ Էգմէքճեան եղբայրներուն։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ և Արեւելեան Րումէլիի ապրանքներուն մաքսը որոշելու համար կազմուած յանձնաժողովը երէկ գումար ուեցաւ առեւտրական և հանրօգուտ շի նութեանց նախարար Զիհնի փաշայի նա խագահութեամբ։ Ցանձնաժողովը կը կազմէին Բ. Դրան կայս. դիւանին տե սուչ Նասըր էֆ., կրօնական գործոց տե սուչ Զիվէր պէյ, Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Հագգը պէյ, մաքսային Խորհուրդին նախագահ Րիզա պէյ, մաք սային վիճակագրութեան խորհրդական Մէհմէտ Ալի պէյ, Պուլկարիոյ առե տրական նախարար Պ. Թօնչէվ, Տրակովիրով, Պ. Վէլինայէվ և գործակա տար Պ. Կեչով։

ՀԵԼԼԷՆԱԿԱՆ դեսպանը ու դեսպա նուհին երէկ Բարիզ ուղեւորեցան Մար սիլիոյ ճամբով։

ՌՈՒՍԻՈՅ կայսեր զբօսանաւին՝ Շթան տարթի հրամանատարը դեր-ծովակալ Ռիմ քի Կորսաքով, առջի օրը այցելութեան տուաւ Ռուսիոյ դեսպան Պ. Զինովիէվ յետոյ իր կնոջ ու աղջկանը հետ Պոլսոյ նշանաւոր վայրերը այցելեց։ Իրիկուն ռուսական դեսպանատան Պիւյիւքտէրէի ամարանոցին մէջ սեղան մը տրուեցաւ ի պատիւ դեր-ծովակալին և սպաներուն։ Ռուսիոյ դեսպանը՝ իր պաշտօնատարներ րով՝ երէկ այցելեց Շթանտարթը, ուր սեղան մը տրուեցաւ։ Զբօսանաւը այսօր Սեւ ծով կ'ուղեւորի։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ անգլիական նաւա բաժինը, առջի օրը Ավլօնայի նաւահան գիստը հասեր է։ Ողջոյններու փոխանա կութենէն ետքը մարտանաւերուն հրա մանատարները այցելութիւն տուեր տեղւոյն գայմագամին որ քիչ ետքը փո խադարձ այցելութեան գացեր է։

ԺԱՆՏԱԽՏԸ.—Իզմիրէն կը գրեն յու լիս 24 թուականով.— «Հանրային առող ջութեան գոհացուցիչ վիճակէն թէեւ կը յուսացուէր որ քարանթինայի սեղմում ները վերնան, բայց անցեալ ուրբաթ ու շաբաթ պատահած երկու դէպքեր մեզի կորսնցնել տուին շահուած տասներկու օ րերը։ Այդ վարակեալներն են Միլթիատ Քոնթուրա և Նաքօ Մորտոյի։ Ատոնց մէկը Սինէքլիի մաքրանոցը տարուեցաւ և միւսը օրթոտոքսներուն մաքրանոցը։ Նաքօ Մոր տոյի գտնուած խանը բնակող տասներ վեց հոգի Սինէքլի մաքրանոցին մէջ քա րանթինայի ենթարկուեցան։ Ատոնց և ոչ մէկը ո և է կասկածելի ախտանիշ ցոյց տուած է մինչեւ հիմա։ Այդ երկու դէպ քերէն զատ, տոքթ. Սէկուրա, չաբաթ օրը, հրէաբնակ թաղին մէջ Յակոբ անուն երիտասարդ Հայու մը վրայ կասկածելի ախտանիշեր տեսած էր: Բժշկական քննութենէ մը ետքը հիւանդը՝ իբրեւ կասկածելի ախտանիշեր ունեցող, Քեամիլպօղլուի շէնքին մէջ մեկուսացուեցաւ:»

—Իզմիրի մէջ չաբաթ ու կիրակի դէպք ու մահ չպատահեցան:

—Պաթումի մէջ Տրապիզոնի ժամանումներուն դէմ հաստատուած քարանթինան վերցուեցաւ: Տրապիզոնի մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է:

—Իզմիրի Թուզի վաճառականները պատուիրակութիւն մը կազմեցին՝ տեղեկութիւն առնելու առողջապահական վարչութենէն թէ Թուզի գործաւորները ի՛նչ եղանակով պիտի աշխատին եւ առողջապահական ի՛նչ միջոցներ ձեռք պիտի առնուին:

ԲԱՐԱՓՆԵՐԸ. — Ճարտարապետ Պ. Վալորի տեղեկագրեց մաքսային վերատեսչութեան թէ Ղալաթիոյ քարափին վրայ մաքսատան շէնքը փլչելու վտանգ կը սպառնայ, հետեւաբար պաշտօնեաներուն հոն մնալը խոհեմութիւն չէ: Մաքսային վերատեսչութիւնը Բ. Դուռնէն արտօնութիւն խնդրեց՝ խարխուլ քանի մը պատեր վար առնելու եւ նորոգութիւններ կատարելու համար:

ՄՈՒՍՈՒԼԻ կուսակալութիւնը Հիճազի երկաթուղիի շինութեան ծախքին համար մէկ միլիոն ղրուշի նպաստի տոմսակ ուղած է:

ԱԹԷՆՔԻ օսմ. դեսպան Րիֆաթ պէյ արձակուրդով Քարլսպատի ջերմուկները պիտի երթայ: Արտաքին գործոց նախարարութեան մասնաւոր դիւանին տնօրէնի օգնական Սաֆա պէյ Աթէնք պիտի երթայ՝ Րիֆաթ պէյի բացակայութեանը միջոցին գործակատարի պաշտօն վարելու համար:

ՄԱՔՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. — Մաքսային վերատեսչութիւնը պատրաստեց ելմտական 1312 տարւոյն մէջ օտար երկիրներէն Թուրքիա ներածուած եւ ասկէ օտար երկիրներ արտածուած ապրանքներուն մէկ վիճակագրութիւնը: Ներածուած ընդհանուր ապրանքներու արժէքն է 2,135,970,631 ղրուշ եւ առնուած մաքսը 156,079,516 ղրուշ: Այս վերջին գումարին վրայ աւելցած է նաեւ 880,238 ղրուշ որ զանազան օտար ծխախոտներու մաքսը կը ներկայացնէ: Մաքսին քանակութիւնը ներկայացնող գումարին մէջ նշանակուած չեն զէնքերը ու ռազմական իրեղէնները, օտար դեսպանատուներու եւ հիւպատոսարաններու անունով բերուած գոյքերը եւ աղօթատեղիներու, վարժարաններու, երկրագործական ու արհեստի վերաբերեալ հաստատութեանց եւ զանազան գործարաններու պատկանած գոյքերը ու ապրանքները, վասն զի ատոնք մաքսէ զերծ են: Նաեւ այդ գումարին մէջ նշանակուած չեն ներքին նաւահանգիստներու միջեւ փոխանակուած տեղական ապրանքներէ առնուած մաքսերը, արտածման ու ներածման ապրանքներու մթերանոցի տուրքը եւ մաքսատան յատուկ ուրիշ հասոյթներ: Նոյն տարեշրջանին արտածուած ապրանքներուն արժէքն է 1,542,845,794 ղրուշ: Ատոնցմէ առնուած է 14,178,953 ղրուշ: Ռէժիի կողմէն օտար երկիրներ եւ առանձնաշնորհեալ նահանգները ղրկուած ծխախոտներուն քանակութիւնն է 14,820,280 քիլօ: 1311 տարւոյն մէջ ներածութիւնները 150,447,234 ղրուշ էին եւ արտածութիւններն ալ 14,218,427: Այդ հաշւով, 1312 տարւոյն մէջ ներածութիւնները 6,512,520 ղրուշ աւելցած են եւ արտածութիւններն ալ 9,474 ղրուշ պակսած:

ՏԱՍԱՆՈՐԴԸ. —Ձեռնհաս պաշտօնարանը հրահանգ ուղղելով ամէն կողմ ծանոյց որ տասանորդի տուրքերը վարձակալութեան տրուելու համար անկարող ու անփորձ պաշտօնեաներ չղրկուին, այլ օրէնքին տրամադրութեանց համաձայն կառավարիչները, տէֆթէրտարները, կուսակալի օգնականները, հաշուակալները, խարբէի ժողովի անդամները եւ ուրիշ հմուտ ու փորձառու պաշտօնեաներու յանձնուի այդ գործը:

ՍԱՄՈՍԻ մետրապոլիտը որ տեղւոյն ժողովին ատենապետ կարգուած էր, հրաժարեր է այդ պաշտօնէն. նաեւ ատենադպիր Նիքոլի էֆ.: Նորէն ընտրութիւն կատարուելով Լոնիթի էֆ. դեր-ատենապետ եւ Անէգլինի էֆ. ատենադպիր ընտրուեր են:

ՏԻՐՐՈՒՀԻ ԷՖ. Բ. Դրան արարողապետը, որ հիւանդ էր, ապաքինեցաւ:

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ 42 թիւ շոգենաւը հանելու գործողութիւնը այսօր սկսաւ: Շարժուն աւազանը Թէրսանէէն դուրս հանուելով բերուած է կամուրջին աջեւ այն տեղը, ուր ընկղմած է 42 թիւը:

ԵՐԿՐԱՇԱՐԺ. — Շաբաթ օրը Մալաթիոյ, Ազիզիէի եւ Արաբկիրի կողմերը երկրաշարժի ցնցումներ զգացուեր են, առանց վտանգաւոր հետեւանք մը ունենալու:

ՊԱՐՍԻՑ դեսպանը Մեծ Կղզի փոխադրուեցաւ՝ իր եղբօրը՝ Խասատուլլահ խանի հիւանդութեանը պատճառով:

ՍԻՎԱՍ ՓԱՇԱՅԻ վիճակը հետզհետէ կը բարւոքի:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Անգլիոյ ու Սերպիոյ դեսպանները եւ Իտալիոյ դեսպանատան գործակատարը երէկ Բ. Դուռը երթալով յաջորդաբար տեսակցեցան արտաքին գործոց նախարարին հետ: Սերպիոյ դեսպանը յետոյ ներքին գործոց նախարար Մէմտուհ փաշայի հետ ալ տեսակցութիւն մը ունեցաւ:

ԻԶՄԻՐ-ԳԱՍԱԲԱՅԻ երկաթուղիին բաժնետէրերու ընդհանուր ժողովը երէկ գումարուեցաւ Բերայի մէջ, բայց խորհրդակցութիւնները վերջնական հանգամանք մը ստացած չըլլալով, այսօր նորէն պիտի գումարուին:

ԲԺՇԿԱԿԱՆ վարժարանի քաղաքային ճիւղին այս տարուան շրջանաւարտներէն հետեւեալները հարկ եղած քննութիւնը տուած ու վկայական ստանալու արժանի նկատուած են.—Յակոբ էֆ. Ալեանաք, Թիմոլէոն էֆ. Բասքալ, Եանի էֆ. Պրաքօ, Ճէմիլ Խալիլ էֆ. Գարեգին էֆ. Մանուկ, Իսմայիլ Հիւսէյին էֆ., Սիմոն Պէրպէրի էֆ., Վէհապ Գատրի էֆ., Աչիլ էֆ. Եորտան եւ Տելէմաք էֆ. Գաւանիկ:

ԶԷՆՔ ԿՐԵԼՈՒ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ. — Սապահ ձեռնհաս պաշտօնարանէն կը խնդրէ առնել զէնքերը այն պահապաններէն որոնք Իզմիրի մեծ սրճարաններուն առջեւ նստած են: Թուրք թերթը կ'ըսէ թէ միայն օտար հիւպատոսարանները իրաւունք ունին զինեալ գավասներ գործածելու, հետեւաբար Իզմիրի գազինօ վարողներուն այդ ընթացքը բոլորովին ապօրէն է:

ԽԱՐԹՈՒՄԻ մէջ կառուցուելու վրայ եղած մզկիթին ծախքը 20,000 ոսկի հաշուուած է, որուն կէսը Էվգաֆի վարչութենէն եւ կէսն ալ խտիվութեան կողմէ պիտի հատուցուի:

ՀՐԴԵՀ. —Երէկ առտու կանուխ Պոլսոյ Շահզատէ Պաշը թաղին մէջ Համտի էֆ.ի դեղարանէն հրդեհ ծագելով ամբողջ շէնքը այրեցաւ: Կրակը սկսաւ դեղարանին աշխատանոցէն՝ առտուան ժամ 8ին: Պատճառը յայտնի չէ: Ոստիկանութեան պահակ մը եւ Բէքճի տնուն մարդ մը հրդեհը տեսնելով խանութին ապակիները կոտրելով ներս մտան եւ դժուարաւ կրցան արթնցնել Համտի էֆ.ն եւ աշակերտները որոնք կը քնանային: Ատոնք երբ սանդուխին կողմէ գացին ամէն կողմ բոցերով պաշարուած էր. մտածեցին վերի յարկի պատուհաններէն վար նետուիլ, բայց պատուհանները երկաթէ վանդակորմեր ունէին. վերջապէս դեղարանին ետին գտնուած նեղ պատուհանէ մը Համտի էֆ. ու աշակերտները կրցան ազատիլ: Նստարան մը եւ շատ քիչ քանակութեամբ դեղ այլն կարելի եղաւ ազատել: Դեղարանին դուրսը գտնուած երկու հարիւր ոսկիի արժէքով դեղեր, որոնք օր մը առաջ բերուած էին, ամբողջովին այրեցան: Զրոյցի մը նայելով հրդեհը առաջ եկած է դեղ մը պատրաստուելէ ետքը լամպարը վառուած թողուելէն եւ կամ պատռած թուղթերու զամբիւղին մէջ լուցկի մը նետուելէն, բայց Իգտամ կ'ըսէ թէ թշնամութեան արդիւնք է: Նոյն թերթը ըսելով որ Համտի էֆ. առաջին անգամ ըլլալով իսլամ դեղարան մը հաստատած եւ ուրիշներու ալ առաջնորդ եղած է, ցաւ կը յայտնէ այդ աղէտին համար. նաեւ կը հերքէ այն լուրը թէ դեղարանը ապահովագրուած ըլլայ:

ՈՃԻՐ ՄԸ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ. — Իզմիրի լրագիրները հետեւեալ ոճիրը կը պատմեն.

Անցեալ չորեքշաբթի գիշեր քարափին վրայ Բանոսեան էֆ.ի տանը մէջ վայրագ ոճիր մը գործուեցաւ: Բանոսեան էֆ. Չէշմէի բաղնիքները գացած էր եւ կինն ալ Եւրոպա: Տանը մէջ մնացած էր կնոջ հօրեղբայրը՝ 50-55 տարեկան Սարգիս: Չորեքշաբթի գիշեր ժամ 2ին Բանոսեան էֆ.ի տունէն մուխ ելլել սկսաւ: Ջրհանկիր զօրքերու գումարտակը անմիջապէս հոն փութաց, հրամանատարը Տրակոնի էֆ. պարտէզի դուռնէն ներս մտնելով դնաց այն սենեակը, ուրկէ մուխը կ'ելլէր. հոն սոսկալի տեսարան մը պարզուեցաւ: Խեղճ Սարգիսի դիակին չուրջը դիզուած նստարաններ, սեղաններ եւ փայտի կտորներ կ'այրէին. ատոնց վրայ քարիւղ լեցուած էր. դիակին մէկ մասն ալ այրեցաւ: Այդ ահռելի ոճիրը գործողները նախ սպանեալը խեղդած էին իր գօտիովը եւ յետոյ չորս կողմը նստարան եւայլն դիզելով այրած էին: Սարգիս նախ տանը բակին մէջ խեղդամահ եղած եւ յետոյ նոյն տունը տարուած էր: Այդ պարագան հաստատուած է բակին մէջ տեսնուած արեան հետքերէն: Սենեակին մէջ ալ օղիի դաւաթներ եւ խորտիկի կտորներ կային, ուրկէ կը հասկցուի թէ Սարգիս սպանուելէ առաջ ոճրագործներուն հետ կերուխում ըրած է, եւ թէ հեղինակները սպանեալին ծանօթներն են: Դիակը դրուած սենեակէն գրպանի ժամացոյց մը եւ ռէվոլվէր մը գտնուած է: Ոստիկանութիւնը տանը պատուհաններէն գտաւ մեծարժէք առարկաներու պահարաններ եւ հին դրամներ: Կատարուած քննութենէն տակաւին արդիւնք մը ձեռք բերուած չէ: Սպանեալին դիակը քննուելէ ետքը թաղումը արտօնուած է: Ոճիրին շարժառիթը գողութիւն ըլլալ կ'երեւայ: Ոճրագործները տանը ամէն կողմը քարիւղ լեցուցեր եւ վառած մոմեր դրեր են, որպէսզի շէնքը յանկարծակի բռնկի, բայց մուխը ժամանակին տեսնելով վտանգին առաջքը առնուեցաւ:

ԻԶՄԻՐԻ Թնէնքճի խանին մէջ Գալնէօղեան էֆ.ի կայէրտի վաճառատունը անցեալ շաբթու գողեր մտնելով, դրամարկղը խորտակեր եւ աւանդ ձգուած 250 ոսկիի արժէքով թանկագին առարկաներ ու տասնըհինգ ոսկի գողնալով փախեր են, բայց գողերը չեն կրցեր դրամարկղին միւս մասերը բանալ, եւ իրենց գործիքները հոն ձգած են: Ոստիկանութիւնը իբրեւ կասկածելի ձերբակալած է հեծելանիւ նորոգող Բէքիրիչա անուն մարդ մը ու տղան:

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՆՈՒԿ. — Կէտիկ Փաշայի կողմը, առջի երիկունը, Հովանոցավաճառ Արթինի տան դրան առջեւ տասնըհինգ օրուան աղջիկ մը գտնուեցաւ. վրայէն գտնուած թուղթէ մը հասկցուեցաւ թէ Հայ է, հետեւաբար Պատրիարքարան յանձնուեցաւ:

ՊԵՐԼԻՆԻ ԱՐՔՈՒՆԻ ԲԱՆՕՐԱՄԱՆ

Տարածուն համբաւը զոր կը վայելէ, իր հաստատման թուականէն ի վեր, քաղքիս ամէնապատուաւոր ընտանիքներուն քով, զմեզ կը քաջալերէ հրաւիրել զՁեզ որ հաճիք Ձեր այցելութեամբ պատուել մեր հաստատութիւնը որուն ներկայացումները, գրաւեցուցիչ եւ միանգամայն հրահանգիչ, Ձեզի հաճոյալի ժամանց մը պիտի հայթայթեն եւ պիտի ուսուցանեն կարգ մը բաներ որոնց ցարդ կ'անգիտանաք:

Պէրլինի արքունի Բանօրաման որուն եւ ոչ մէկ նմանօրինակ հաստատութիւն նոյն իսկ հեռուէն չի հաւասարիր, վերջին ատրիճան կը շահագրգռէ մեծ ու պզտիկ, գեղարուեստական տեսարաններու պատկերացումով, պատկերացում մը որ իրականութեան հետ կարելի չէ շփոթել:

50 լուսանկար պատկերներու հաւաքածոյի մը մէջ որ միակ ճամբորդութեան մը զանազան դէպքերը կը ներկայացնէ եւ որոնք խոշորացոյց ապակիներու միջոցաւ բնական հասակի եւ չափերու կը վերածուին, յաջորդաբար Ձեր հմայուած աչքերուն առջեւ կը պարզուին. հոն կը տեսնէք կեանքը հողի եւ ծովի վրայ այնքան բնականօրէն եւ հաւատարմօրէն պատկերացած, որ եթէ բաժանումը չըլլար որ Ձեզի կը յիշեցնէ պատրանքը, պիտի կարծէիք ամէնէն խոր համոզումով, թէ ստուգիւ դուք էք որ կը ճամբորդէք: Ըլլայ շոգենաւով թէ շոգեկառքով, նոյն իսկ օդապարիկով, ամէն բան կ'այցելէք, ամէն տեղ կը մտնէք կ'ելլէք. ապարանքները, դղեակները, տաճարները, թանգարանները գոց դուռ չունին Ձեզի համար, ամէնէն բանաստեղծական վայրեր ձեզի ցոյց կու տան, բնութիւնը իր ամէնէն փայլուն ինչպէս նաեւ իր ամէնէն վայրենի արտայայտութեանց մէջ:

Լուսանկարչական նորագոյն եւ հրաշալի գիւտի մը որուն գործադրութեան միակ իրաւունքը Պէրլինի արքունի բանօրամային շնորհուած է, Վիլհէլմ կայսեր մասնաւոր հրովարտակով, ներկայացուած տեսարանները, առարկաներու ձեւը, գոյնը ու ցցուածքը ինչպէս նաեւ իրարմէ ունեցած հեռաւորութիւնները այնքան մանրամասն եւ կենդանի կերպով կը ներկայանան որ այսինչ գեղեցիկ կապոյտ լճին միապաղաղ մակերեւոյթին առջեւ, հոն մխրճուելու եւ լողանալու անդիմադրելի փափաք մը կը զգայ մարդ. ձիւնապատ այս ինչ լեռան կամ անտառին դիմաց մարդ ձեռքը ակամայ կը կարկառէ ափ մը ձիւն առնելու համար հոնկէ: Պուլվառներու վրայ, այս ինչ ծերունիին դէմքին տակ որուն խորշոմները անգամ կարելի է տեսնել. այս ինչ ծանօթ անձը տեսնել կը կարծես եւ մինչեւ այսինչ արդուզարդի շնորհալի կտրուածքին ու ձեւին ինչպէս փափուկ գոյներուն վրայ կը սքանչանանք, անդին ձեր ուշադրութիւնը օտարական մը տարօրինակ տարազին վրայ կը կը հրաւիրուի:

Մէկ խօսքով, թիւերու հիանալի չըրթայաւորման եւ հարուստ լուսաւորութեան մը շնորհիւ որ գոյներու փայլը կ'աւելցնէ, անակնկալէ անակնկալ, հիացումէ հիացում կ'անցնինք, տեսնուած բաներէն անմոռանալի յիշատակ մը պահելով եւ դարձեալ ու միշտ տեսնելու փափաք մը կ'զգանք ձեր մէջ այս հիանալի տեսարանները, որոնք երբեմն նոյն իսկ բնութենէն աւելի վեհապանծ են:

Ամէն շաբթու, մէկ կիրակիէ միւսը, Նոր Ճամբորդութիւն մը կը ներկայացուի որուն նիւթը միշտ օրուան կարեւորագոյն դէպքերէն փոխ առնուած է: Այս կերպով ոչ միայն աժան գինով զուարճանալու հազուադէպ առիթ մըն է որ կը հայթայթենք հասարակութեան, այլ նաեւ մեր ներկայացումներէն ոմանք բաց են այցելուներուն համար օրուան եւ գիշերուան ամէն ժամուն, գիտական, գեղարուեստական եւ պատմական ծանօթութեանց ստուար հաւաքածոյ մը պիտի տանին իրենց հետ բոլոր այցելուները:

Մուտք 2½, տղոց համար 1, 8 տոմսակի գին 12:

Սպասելով ձեր մօտակայ այցելութեան, կը խնդրեմ որ ընդունիք հանդերձ շնորհակալութեաց խորին յարգանացս հաւաստին:

Կ. Պոլիս, Յուլիս 1900
Պէրլինի կայսերական Գեղարուեստական Թանգարան
14, Բրմի Նան, օթէլ տը Լոնտրը մօտ:
Յառաջիկային,
Ճամբորդութիւն ի Բարիզ:
1900ի Արուեստահանդէսը:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի մեր թղթակիցներէն եւ յօդուածագիրներէն որ իրենց ձեռագիրները թուղթին մէկ երեսին վրայ միայն գրեն, տպարանի աշխատութեանց դիւրութեան համար:

ԱԶԳԱՅԻՆ

Գարակէօմրիւկի Զարխաւիան Ս. Աստուածածնայ պատկերին համար Սրմաշի Խնամակալութիւնը կարգադրութիւն մը ըրեր է որ կրնայ ընդհանուրին գոհացում պատճառել: Պատկերը առժամաբար պիտի փոխադրուի Ղալաթիոյ եկեղեցին ուր պիտի պաշտօնավարեն նաեւ Գարակէօմրիւկի երկու քահանաները: Այրած եկեղեցին դարձեալ Ս. Յովհան Ոսկեբերանի անունով պիտի շինուի Գարակէօմրիւկի մէջ, «Ռոսիա» Ընկերութեան վճարած դրամով եւ ժողովրդային նուէրներով: Եկեղեցիին շինութենէն ետքը պատկերը պիտի փոխադրուի նորէն իր առջի տեղը:

—Թիֆլիսի օսմ. հիւպատոսարանը ուշադրութեան առնելով որ Ռուսիա գացող օսմ. հպատակներու մէջ կրնան գտնուիլ այնպիսիներ, որոնք իրենց ծննդավայրին մէջ ընտանիքի եւ զաւակներու տէր ըլլալով Ռուսիոյ մէջ վերստին կ'ամուսնանան, ռուսահայ հոգեւոր բարձրագոյն իշխանութեան զեկուցում մը ըրեր է որ միջոց մը խորհուի այդ անպատեհութեանց առաջքը առնելու համար: Ս. Հայրապետը հիւպատոսարանին գրաւոր բացատրութեամբ մը յայտներ է թէ նմանօրինակ ամուսնական առիթներու մէջ հոգեւոր իշխանութեան կողմէ ի՛նչ տեսակ ձեւակերպութիւններ տեղի կ'ունենան, աւելցնելով որ այս մասին աւելի ուշադրութիւն ըլլալու համար հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնուին: Ս. Հայրապետը այս խնդիրը մասնաւոր գրութեամբ մը զեկուցեր է նաեւ Ս. Պատրիարքին:

—Սալնապատի որբանոցին համար Ս. Հայրապետը Վանայ այցելու հովիւին գրած է թէ Նատիրեանցի նուիրատուութեամբ պիտի հոգացուի: Նպաստից Յանձնաժողովը սակայն, նկատելով որ նոյն որբանոցին մատակարարութեան ծախքը կը հոգան արդէն Նիւ-Եորքի Հայուհիները, Տ. Ներսէս եպիսկոպոսէ տեղեկութիւն ստանալէ ետքը ա՛յն տեսակ կարգադրութիւն մը պիտի ընէ որ Նատիրեանցի ինչպէս նաեւ Նիւ-Եորքի Հայուհիներուն նուէրներէն Վանայ երկու որբանոցներ օգտուին, մէկը Սալնապատինը եւ միւսն ալ քաղքին մէջ:

—Սեբաստիոյ Քարհատ գիւղէն կը գրեն մեզ.—«Արեւելքի մէջ գրուեցաւ Սըվազի գլխաւորաբար Զառայ գիւղաքաղաքի եւ անոր շրջակայ հայ գիւղօրէից թեմական վիճակին տխուր կացութեան վրայ: Ատով կը սպասուէր ու եւ է միջոց բարւոքման նոյն տեղերու թեմական վիճակին, սակայն մինչեւ ցարդ ո՛չ տեղացիք եւ ոչ ալ Առաջնորդարանը, ձեռք չառին նոյն խնդիրը: Կրնանք ըսել որ նոյն գիւղերու վիճակն ու ընթացքը այդպէս միշտ յետադէմ եղած է սկիզբէն ի վեր, եւ պիտի շարունակուի դեռ շատ տարիներ քանի որ 1. Տեղացիք անտարբեր կամ աւելի ճիշդը տգիտութեամբ անկարող եղած են խորհիլ իրենց յառաջդիմութեան վրայ, եւ 2. Առաջնորդարանն ալ օր մը օրանց չուզեր զբաղիլ առ հասարակ՝ գիւղերու գործով. կարծես բոլորովին մտքէ հանած է զանոնք, այնպէս որ եթէ երբեմն պատահի անոնց կողմէ դիմումներ, գրեթէ անլսելի կը մնան:—Ուրեմն տեղւոյս ժողովուրդը չէ այնչափ մեղադրելի որչափ առաջնորդարանը:—Նոյն տեղերու հասարակութիւնը իրաւ է որ կ'ունենայ եւ ունի փափաքներ կարգադրման եկեղեցւոյ եւ վարժարանի գործերու, սակայն ինքնին չէ կրցած իր այդ փափաքին հասնիլ: Ընթերցողն ալ կրնայ հաստատել որ տգէտ, ռամիկ եւ մանաւանդ կանուխէն այդ տեսակ գործերու անվարժ գիւղացի հասարակութիւն մը չի կրնար ինքնին ո՛չ կարգադրութիւն ընել, ո՛չ ընտրութիւն, եւ ոչ այլ ինչ, առանց հոգեւոր պետի մը, այդ հոգեւոր պետը՝ անշուշտ Առաջնորդ Սրբազան Հօրմէն սպասելու իրաւունքը ունինք: Աւելի ցաւալին այն է որ յիշեալ գիւղերու քահանաներն ալ չեն սիրած երբեք զբաղիլ այդ գործերով, որչափ որ ալ գիտուն ըլլան, որովհետեւ իրենց ծուխերը միայն կը խորհին: Շատ քիչ անգամներ ընտրութիւն կ'ընեն եւ կը հաստատեն միայն անուամբ թաղականներ, որոնց մասին երբեք ուշադրութիւն դարձնող չի գտնուիր, որովհետեւ ժողովրդեան մէկ մասը անհոգ անտարբեր միւս մասն ալ աղքատ եւ ապրուստի կարօտ են: Մասնաւորաբար մեր Քարհատ գիւղը ահա այս պատճառներով եւ իր քահանային անտարբերութեամբը արգահատելի վիճակ մը ունեցած է: Իր եկեղեցին՝ որ ունի բաւական պահանջ, բոլորովին երեսի վրայ մնալով, ինքն ալ խեղճ մնացած է. ուսման խնդիրը արդէն անպէտ բան մը համարուած է: Վարժարանին մէջ կը կարդացնեն Սաղմոս, Գործոց, Նարեկ եւայլն. երբեք հաւանութիւն չկայ որ տղոց ձեռքը Մայրենի լեզու կամ ուրիշ իրենց հասկնալի գրքեր տրուի, որովհետեւ կը պարունակեն եղեր շուն, գայլ, կատու: Դժբաղդաբար այս դարուս մէջ եւս դեռ ունինք դպրոցներ ճիշդ հին դրութեամբ Քարհատի, Ալաքիլիսէի, Ղարապօղազի, Թէքէլիէլի, եւ ուրիշ շատ գիւղերու մէջ՝ 2—3 ամիս միայն շարունակելի, որով ազգ. խեղճ մանկտին բոլորովին զրկուած կը մնայ մինչեւ վերջը ուսումէ, գիտութենէ եւ կրթութենէ: Քարհատի համար վարժարանի մը պէտքը գոհացնող եկեղեցւոյ մէկ հասոյթը, Ջաղացքը, բոլորովին ձեռքէ երթալու վրայ է, ինչպէս Նախապէս գրած էին, աւելորդ կը համարիմ կրկնել մանրամասնաբար: Ինչո՞ւ ծախուի այդ Ջաղացքը (այն ալ ոչինչ գնով մը) որ խիստ օգտակար էր, ինչո՞ւ կարելի եղածին չափ չգանձուի եկեղեցւոյ պահանջները եւ կանոնաւորուի ամէն գործ յօգուտ եկեղեցւոյ, վարժարանի եւ աղքատ կարօտելոց, որք այնքան բազմաթիւ են»:

—Բանկալթիի Առեւտրական եւ Լեզուագիտական կրկին վարժարանաց պարգեւաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ ամսոյս 14ին ուրբաթ օր, նախագահութեամբ Գեր. Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեանի: Սարքուած էր կոկիկ ու սիրուն հանդէս մը որ բացուեցաւ Համիտեան քայլերգով: Աշակերտներէն ոմանք արտասանութիւններ ըրին իրենց առած դասերէն, ու երգեր երգեցին:

Սոյն կրկին վարժարանաց հիմնադիր տնօրէնը Յակոբ էֆ. Բագրատունի կարդաց միամեայ տեղեկագիրը, ծանրանալով տոհմային դաստիարակութեան, լեզուագիտութեան եւ վաճառականութեան արուեստին վրայ, որոնք Առեւտրական վարժարանի անփոփոխ հիմերը կը ներկայացնեն: Աշակերտներու եւ աշակերտուհիներու գծագրութեան, գեղագրութեան եւ աշխարհագրական քարտէսներու ու ձեռագործի նուրբ արտադրութիւններ ցուցադրուած էին հանդիսասրահին մէջ որ շատ նեղ կու գար բազմաթիւ երկսեռ հանդիսականներուն: Հանդիսականները հիւրասիրուեցան օշարակներով: Ալիանս Ֆրանսէզի Նախագահին Պարոն Տրվանտէօվրի կողմէ ընծայուած գրական երկու պարգեւները ընդունեցան՝ Պ. Վահան Գոգեան եւ Օր. Զապէլ Մկրտիչեան որոնք ֆրանսերէն լեզուի մրցման մէջ առաջին հանդիսացած են: Օսմ. լեզուի յատուկ առաջին մրցանակը ստացաւ Պ. Տիրան Թաշճեան եւ Հայ. լեզուի մրցանակը Պ. Մելիք Շիրինեան: Կարգ փոխելու արժանի դատուած աշակերտներու իւրաքանչիւրին գրական մրցանակներ տրուեցան Տնօրէնութեան կողմէ:

Վարժարանին ուսուցիչներէն Կարապետ էֆ. Փափուճեան խօսեցաւ մասնաւոր վարժարաններու օգտին վրայ եւ գովաբանեց Առեւտր. վարժարանը: Հուսկ ապա Սրբազան Նախագահը Տոհմային դաստիարակութեան եւ կրթութեան վրայ տեսութիւններ պարզելով, հրաւէր կարդաց հանդիսականներուն սրտով փարիլ Առեւտր. վարժարանին որ իր տեսակին մէջ մէկ հատիկ է: Բագրատունի էֆ.ի ձեռնարկներէն մէկուն՝ այն է մանչերու արուեստանոցին յառաջանալու մասին փափաք յայտնեց. եւ ապա օրհնելով ուսանողներն ու ուսուցչական մարմինը, քաջալերեց զանոնք եւ Վեհ. Սուլթանին համար բարեմաղթութիւններ ընելով փակեց հանդէսը օրհնութեամբ: Հանդիսականները հաճոյալի տպաւորութեամբ մը տակ մեկնեցան վարժարանէն:

—Այսօրուան Պաշտօնականներուն մէջ ծանուցուած է թէ չորրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուած է Չէյթունի հոգեւոր հովիւ Տ. Կարապետ քահանայի եւ հինգերորդ կարգի Մէճիտիէ՝ Չէյթունի երեւելիներէն Նազարէթ աղայի:

—Ցաւով կը ծանուցանենք Տիկին Երանուհի Կիւմիւշկէրտանի մահը որ ոչ միայն խորին սուգով կը համակէ Կիւմիւշկէրտան ընտանիքը ու անոր հետ ազգակցութիւն ու խնամութիւն ունեցող ծանօթ ընտանիքները, այլ եւ դառն տպաւորութիւն մը կը թողու ամէն անոնց վրայ, որոնք մօտէն կը ճանչնային հանգուցեալ Տիկինը:

Տիկին Երանուհի, ինչպէս յայտնի է, այրին էր հանգուցեալ Ռուբէն էֆ. Կիւմիւշկէրտանի: Իր բովանդակ հոգածութիւնը նուիրած էր իր զաւակներուն դաստիարակութեան ու խնամքին, եւ այդ տեսակէտով տիպար մայր մը կը ներկայանար. առտնին ու ընկերային կեանքի մէջ, իր բնածին ազնուութիւնը, դժբաղդներու եւ աղքատներու օգնելու փութկոտ կարեկցութիւնը, իր շատ մը ձիրքերուն հետ միացած՝ հայ իգական սեռին մէջ տուած էին իրեն յարգելի դիրք մը որուն քիչեր կ'արժանանան ճշմարտապէս: Տիկին Երանուհի Կիւմիւշկէրտան բաւական տարիներ գործօն կերպով ատենապետած է Հիւանդանոցի Տիկնանց Խնամակալութեան, մեծապէս օգտակար ըլլալով ազգին այդ գթութեան Տանը որուն վրայ մասնաւոր գուրգուրանք մը ունէր եւ ուր անձամբ կ'երթար շատ անգամ մխիթարել պատսպարեալները:

Հանգուցեալ Տիկինը կը թողու չորս մանչ զաւակ—որոնց անդրանիկը, Տիրան էֆ. Կիւմիւշկէրտան՝ իր եղբայրներուն հետ կը վարէ առեւտրական կարեւոր տուն մը—եւ չորս աղջիկ զաւակ՝ ամէնքն ալ ամուսնացած, Տիկնայք Սերովբեան, Ճէվահիրճեան, Կիւլպէնկեան եւ Խամէրեան: Այս դառն կորուստին առթիւ, կը փութանք մեր ցաւակցութիւնները յայտնել հանգուցեալ Տիկնոջ զաւակներուն ինչպէս նաեւ անոնց հօրեղբօր՝ Գրիգոր էֆ. Կիւմիւշկէրտանի եւ Տիկին Գ. Կիւմիւշկէրտանի:

Յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարուի վաղը առաւօտ, ժամ 3 ուկէսին, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին ուր փոխադրուեցաւ երէկ իրիկուն հանգուցեալ Տիկնոջ մարմինը Պէպէքէն՝ իր բնակարանէն, ուր հոգին աւանդած էր նախընթաց գիշեր:

Տէր եւ Տիկին Տիրան Կիւմիւշկէրտան, Տեարք Արմենակ, Գարեգին, Երուանդ եւ Լեւոն Կիւմիւշկէրտան, Տէր եւ Տիկին Գ. Սերոբեան եւ զաւակունք, Տէր եւ Տիկին Լ. Ճէվահիրճեան, Տէր եւ Տիկին Կիւլպէնկեան, Տէր եւ Տիկին Գ. Խամէրեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Կիւմիւշկէրտան, ինչպէս նաեւ Մինասեան, Փափազեան, Յ. Գէօչէօղլու, Կիւլպէնկեան եւ Գաբրիէլեան ընտանիքները ցաւ ի սիրտ կը ծանուցանեն զդառնաղէտ մահ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵՐԱՆՈՒՀԻ
Ռ. ԿԻՒՄԻՒՇԿԷՐՏԱՆԻ

որ հանգեաւ ի Տէր, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի, յառաջիկայ Չորեքշաբթի 19 Յուլիս, ի ժամ 3ուկէս (Բ. Թ.), ի Ս. Երրորդութիւն եկեղեցւոջ Բերայի, ուր արդէն փոխադրեալ է Հանգուցելոյն մարմինը, որ անտի պիտի ամփոփուի Շիշլիի Ազգային գերեզմանատունը, իր գերդաստանին յատուկ դամբարանին մէջ:

Պէպէք, 17 Յուլիս 1900

Մահազդ չստացողներէն կը խնդրուի իբր այն նկատել ներկայս:

Հեռագիր Այսօրուան

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԼՈՆՏՐԱ, 30 յուլիս.—Չինու դէպքերուն վրայ ճշգրիտ լուր մը չկայ, բայց սա յայտնի է որ չինական հեռագիրներու շատերը կեղծ են: Ընդհանրապէս կը կարծուի թէ օտար դեսպաններէն ողջ մնացողները իբրեւ պատանդ վար դրուած են:

—Եանկ-Չէի մէջ նորէն սպանութիւններ գործուեցան: Ռուսերը ետ կը մղեն Մանճուրիոյ Չինացիները:

ՀՌՈՄ. —Քանի մը հարիւր կաթոլիկ քահանաներ փափաք յայտնեցին Չին երթալ՝ սպաննուած միսիոնարներուն պակասը լրացնելու համար: Իտալական լրագիրները խստիւ կը հակառակին այդ առաջարկութեան:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ԼՈՆՏՐԱ.—Այսօր զրոյց ելաւ թէ Բրինզլօու անձնատուր եղած է 5000 հոգիով, բայց տակաւին պաշտօնական հեռագիր մը հաստատած չէ այդ լուրը:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՊԵՐԼԻՆ, 30 յուլիս. — Թըն-Չինէն Գերման հիւպատոսը կը հեռագրէ յուլիս 28 թուականով.—Պէքինի ճափոնական դեսպանին մէկ զեկոյցը յուլիս 19 թուականով կը ծանուցանէ թէ Պէքինի օտարականները տակաւին ինքզինքնին կը պաշտպանեն Չինացիներուն դէմ եւ թէ կրնան մինչեւ յուլիսի վերջը դիմանալ: Չինացիները յուլիս 18ին դադրեցուցեր են օտար զինուորներու դիրքերուն ռմբակոծումը: Պէքին գտնուող ճափոնական զինուորներուն հրամանատարը կը հաստատէ այդ լուրը:

ՎԻԷՆՆԱ.— Ֆրեմտէնպլաթ կ'ըսէ թէ միջոցներ ձեռք առնուած են աւստրեւհունգարական նաւահանգիստներուն մէջ՝ ռազմամթերքներուն դէպ ի Չին առաքումը արգիլելու համար:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ԼՈՆՏՐԱ.— Պէրթմանէն յուլիս 30 թուականով կը հեռագրեն Ռոպէրթի թէ Ֆիւրիզպուրկի մէջ հինգ հազար Պօէրներ անձնատուր եղեր են անպայման կերպով:

ՍԵՐՊԻԱ

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Ռուսիոյ հեռագրական գործակալութիւնը կը հերքէ այն լուրը թէ Գարաճորճեւիչ իշխանը Սերպիոյ սահմանագլուխը գացած ըլլայ: Իշխանը Չէթինէ կը գտնուի՝ իր երկու զաւակներուն հետ:

Տր. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
396, Մեծ փողոց Բերա, 396
Տեսնել 4րդ երեսը
Պոլսոյ կողմը մասնաճիւղ չունինք

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնսոլիտէ Սերի Դ.	Օ. Ո.	24	13½
Ամէնէն բարձր գին	»	24	15½
Ամէնէն վար գին	»	24	12
Ռումէլի երկթ. զոզ.	Ֆր.	107	50
Ամէնէն բարձր գին	»	107	75
Ամէնէն վար գին	»	107	—

ԲԱՑՈՒՄ 19 Յուլիս

Օսմ. Քոնսոլիտէ Սերի Դ.	Թ. Կ.	24	13
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	107	87
Օսմանիէ		—	—
Ռէժի		—	—
Օսմ. Պանքա		—	—
Քրէտի Ժէնէրալ Օթոմ.		0	34
Սօս. Օթ. Շանժ է Վալէօռ		0	14
Օսմ. Ապահ. Ընկ.		4	18
Թմամուէյ բաժնեթ.		6	32
» ժուիսանս		205	—
» պարտաթ.		480	—
Քարափ Կ. Պոլսոյ		468	—
Թրանվայ		76	—

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	Ղրշ.	108	22½
» » » չէք	»	109	17½
Բարիզ » »	Ֆր.	23	07½
» » » չէք	»	22	97½
Պէրլին անտոկոս չէք	Մարք	28	66
Վիէննա չէք	Ֆիոր.	22	11

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

20 ֆրանքնոց	Ղրշ.	87	25
Անգլիական ոսկի	»	110	(2
Բօլ էմբէրիալ	»	90	30
Քրիմից	»	52	08
Մէճիտիէ արծաթ	»	108	01
Մէթալիք	»	85	20
Ռուպլի Թղթադրամ	Օ. Ո.	8	60

ԼԱ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Առաջին առանձնաշնորհեալ
Ապահովագրական Ընկերութիւն
ՌՈՒՍՃՈՒՔ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կարասի, անշարժ ստացուածք, վաճառք, եւն. մայրաքաղաքին և գաւառներուն մէջ։

Լաւ պայմաններ։—Շահաւոր ապահովագիններ։

ԿԵԱՆՔԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ կեանք, խառն, որոշեալ ժամանակ, տղոց օժիտ և ծերութեան համար հասոյթ։ Անկախ Թարիֆա մը անձնապանութեան, մենամարտի և ճամբորդութեան համար։

ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատութեան ժամանակ եղած դժբաղդութեանց դէմ։ Ապահովագրութիւն ճամբորդներու համար, առնուած ապահովագինները ետ տրուելով կամ առանց ետ տրուելու։

ԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Առաջին կարգի երաշխաւորութիւններ խիստ մեծ Ընկերութեանց կրկին կրկին ապահովագրութեամբ։

Ընդհանուր գործակալութիւն բովանդակ Արեւելքի համար (Թուրքիա, Յունաստան, Եգիպտոս, Սուրիա)։

Ժ. Գ. ՔԱՍԱՐԷԹԹՕ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գաֆաֆեան խան, Թիւ 6 9

Գլխաւոր գործակալութիւն,—Կ. Պոլիս, Սառըգիւլ խան, Պահճէ Գաբու։

Ընկերութեան դրամատունն է

ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ 599

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԼԵՒՈՆ Ժ. ՊԷՅԶԱՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Ղալաթիա, Վօյվօտա փողոց [illegible]
Մաֆրի խան, Թ. 2

Վերոյիշեալ դրամատունը ամէն տեսակ վաճառականական ու պանքայի գործառնութիւններ կ'ընէ։

Արժէթուղթեր աւանդ առնելով փոխատուութիւն։— Գաւառները և արտասահման ղրկուելիք գումարներու գանձում և առաքում։— Կտրօններու գնոյ, չէքեր՝ բովանդակ Թուրքիոյ և Յունաստանի համար։—Այս դրամատան մէջ ամսական 20-100 ղրշ. վճարելով կարելի է գնել՝ Օսմանեան և Հելլենական երկաթուղիի պարտաթուղթեր, Եգիպտական Քրէտի Ֆօնսիէ, Վիլլ տը Բարի, Վիլլ տը Պրիւքսէլ, Բանամա, Վիլլ տը Բարիի քառորդ թուղթեր, եւայլն, այլն։

ԱԶԴՈՒ ՄԱՔՐՈՂԱԿԱՆ ՄԸ

Մաքրողականի մը եթէ պէտք ունիք և կը փափաքիք տաղանց նեղութեան խմել անմիջական ազդեցութեամբ, թողէք Եանոսի նման զգուեցուցիչ ջուրերն ու դեղերը, որոց մեծագոյն մասը կեղծ են, ու փութացէք գնել՝

VILLACABRAS

աշխարհահռչակ մաքրողականն, որ բնական աղբիւրներէն Բասդեօռեան դրութեամբ զտուած յստակ ջուր մըն է և շատ դիւրաւ կը խմուի։ Ազդեցութիւն անմիջական։ ՎԻԼԼԱՔԱՊՐԱՆ ուրիշ լուծողական ջուրերու նման ոչ խիթ և ոչ անհանգստութիւն կը պատճառէ։ Առտուն անօթի, ջուրի գաւաթ մը ՎԻԼԼԱՔԱՊՐԱՆ՝ տասը վայրկեան ընդմիջումով երկու անգամէն կէս առ կէս խմել, բաւական է կատարելապէս մաքրուելու։ Պնդութիւն, գլխուցաւ և ստամոքսի խանգարում ունեցողներ, մանաւանդ նստողական կեանք վարող անձինք, եթէ ամէն առտու թէյի կամ գինիի գաւաթ մը Վիլլաքապրան խմեն, կ'ազատին պնդութենէն և անոր հետեւանք հիւանդութիւններէն։

Կը ծախուի ամէն դեղարաններու և դեղավաճառատուններու մէջ։

504 29—52

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԻԿԻ

DEPOSÉE MARQUE FONDÉE EN 1883

ՊՕՂՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Որ 16 տարիէ ի վեր Ղալաթիոյ և Բերայի պատրաստ կօշիկի վաճառատանց իր սեպհական գործարանէն կը հայթայթէր եւրոպական նիւթերով պատրաստուած ամէն տեսակ կօշիկ արանց, կանանց և տղայոց, այս անգամ բացած է ի Ղալաթիա ԿՕՇԻԿԻ ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ մը, ուր նաև միշտ պատրաստ կը գտնուի Ֆրանսական և անգլիական գործարաններէ բերուած ամէն տեսակ կաշիէ և լաթէ կօշիկներ, Բօ-տը-Սիւէտ լուսարին, վիտելա, կլասէ, այծի մորթ, քարտմանտօլ, և մետաքս, նաև զուտ քթանէ ամէն տեսակ, ամէն գոյն, կտորով և պարզ կիսակօշիկներ։ Ճշմարիտ կտորով և քամով։ Յանձնարարութիւնք կը կատարուին նաև չափու վրայ։ 592

Բարեձեւութիւն, տոկունութիւն եւ անմրցելի աժանութիւն

(Բաղտալեաց պողոտային գինճոյ Թիւ 15)

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

Տ՛ր Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ 396

(Եանննի զարեչրատան վրայի յարկը, ճիշդ Զըպուճեանց դէմը),

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենատատիկ ցաւած ակռաներ մէկ անգամէն կը լեցնէ. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։

Նորահնար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արհեստական ակռաներ կը պատրաստէ, յար և նման բնականի, դէմքի ձեւաւորութիւն բուս տալիքի, ծամողութիւն եւ ազատ արտասանութիւն երաշխաւորեալ։

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին ինչպէս նաեւ Թմրեցուցիչ դեղերու և ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի տառապելու ականահանութիւն։

Յ. Գ. Ձմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կէս օր) ինչպէս նաև ամէն օր (մինչեւ կէս գիշեր) հիւանդ կ'ընդունին։

Տանօր.—Պոլսոյ կողմը մասնաճիւղ ՋՈՒՆԻՆՔ ։։ 197

ՄԻՇԷԼ ԹԻՖԼԻՔԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ

Ղալաթիա, Վօյվօտա Պահականոցին կից թիւ 91

Վաճառատանս մէջ ամէն տեսակ ակնաբուժական և վիրաբուժական գործիքներ կը վաճառուին ՄԵԾԱՔԱՆԱԿ և ՓՈՔՐԱՔԱՆԱԿ։ Կակուղ և կարծր լաստիկէ (քաուչուկ) առարկաներ, աճուկի կապիչներ (գասըգ պաղը), տեսակ տեսակ գըրխներ (շիրինկա), ելեքտրական մեքենաներ, ջերմաչափներ, հեռադիտակներ, խոշորացոյցներ, մանրադէտներ (միքրոսգոբ), փոքր և մեծ մանրադէտի ապակիներ, նորատեսակ ոսկի եւայլն ակնոցներ կը գտնուին վաճառատանս մէջ։ Գիները շատ աժան։ Ցաճախորդք շատ գոհ պիտի մնան։

ԼԷ ԲՐՕՎԷՆՍ ՐԷՒՆԻ
LES PROVINCES RÉUNIES

ՀԱՍՏԱՏԵԱԼ ԻՊՐԻՒՔՍԷԼ

Ապահովագրական ընկերութիւն ընդդէմ հրդեհի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԸՆԿ. ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ

Քննիչ Տնօրէնութեան
Ա. ԿԻՒՐԵՂԵԱՆ

Տնօրէն ընդհանուր Թուրքիոյ
ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Ճէտիտ խան

Գաւառաց համար պատուաւոր երաշխաւորութեամբ գործակալներ կը փնտռուին

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐ

Krondorf

la meilleure eau de table alcaline gazeuse pure

Բոլոր բժիշկներու կողմէ յանձնարարուած

Հանքային ջուրերու ձեռնարկութիւն Քրօնտորֆի մէջ։ Ընդհանուր ներկայացուցիչ ՆԻՍԻՄ ԼԷՎԻ, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, Գույումճըլար խան՝ Թիւ 2։ Կը ծախուի գլխաւոր ճաշարաններու, օթէլներու, դեղարաններուն մէջ եւայլն։

Գործակալ Լէվի Պոխոր՝ Էտիրնէ։ Սթրումիցա ու Մոտիանօ՝ Սէլանիկ։

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Ամենածին Միջազգային Ընկ.ն
Կենաց վրայ ապահովագրութեան
Տնօրէնութիւն յԵւրոպա

Բարիզ 1 և 3 Լը Բէլթիէ փողոց (Պուլվառ տէ զ'Իդալիէնի անկիւնը)։

Զուտ փոխադարձ շահերը կը պատկանին Ընկ. ԱՄԲՈՂՋ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼՆԵՐՈՒՆ։

1900 Յունուար 1ին ամբողջովին իրականացած երաշխաւորութեան պատրաստ գումարն է ՄԷԿ ՄԻԼԻԱՄ 225 ՄԻԼԻՈՆ Ֆր.։ Ապահովագրութիւն որ կը բանի՝ 5,503,000,000Ֆր.։ Ընկերութեան հիմնուելէն ի վեր՝ 1845՝ ապահովագրեալներու վճարուած՝ մէկ միլիառ 545 միլիոն։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ընդհանուր ապահովագիրը (բոլիս) աւելի շատ առանձնաշնորհումներ և առաւելութիւններ կընծայէ ապահովագրելոց քան ուրիշ ընկերութեանց պայմանագրերը։ ՆԻՒ-ԵՈՐՔԻ ապահովագիրն առարկելի չէ բնաւ, և յանձման թուականէն սկսեալ կերաշխաւորէ արհեստի. բնակութեան և ճամբորդութեան յարակից բոլոր վտանգներն և մահուան ամէն պարագաները. առանց բացառութեան, նոյն իսկ պատերազմի պահուն։ Ապահովագիրն իրաւունք կու տայ տարուէ տարի փոխառութիւններ ընել, որոնց գումարը նշանակուած կըլլայ կանխաւ ապահովագրութեան մուրհակին մէջ։ Առաջին տարեվճարէն սկսեալ, ապահովագրուողին համար իրաւունքէ անկում չկայ։ Ընդհանուր ապահովագիրը կ'վճարուի ի դէպ մահու ապահովագրեալ անձին ըրած բոլոր մասնաճճարներով, ինչպէս նաև ապահովագրեալ դրամագլխով եւհարիւրին չորս երաշխաւորեալ տոկոսով։ Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար դիմել առ.

Տնօրէնութիւն ի Թուրքիա
Ժ. ՈՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.
Քննիչ-Պատուիրակ
192 Ա. ՋՈՒՀԱՃԵԱՆ
Վօյվօտա փողոց Վիթալիս խան Ղալաթիա

ՏՕՔԹԷՕՐ Ց. ԱՐԱՊԵԱՆ

Տանօր ատամնաբոյժ Բարիզի
Ի Սիթէ տը Բերա, Թիւ 1

Ամէն օր կ'ընդունի ժամը 4էն 10 (Ը. Թ.)։ Բշ. և Ուրբ. կէս օրէն առաջ Սիրքէճի դեղարան Նալբաս։ Կիրակի օրերը ժամադրութեամբ։

Աղքատաց ձրի 490

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԱՐՈՔԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԿՆՈՂ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Յուլիս 31ին Անդոլի, Մարսիլիայէն։
Օգոստ. 6ին Մինկրէլի, Անատոլուի եղեր.

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Օգոստ. 1ին Անադոլի, Սամսոն, Տրապիզոն և Պաթում։
» 7ին Մինկրէլի, Մարսիլիա։

Տոմսեր ուղղակի Բարիզի համար.

Առաջին կարգի 245 Ֆրանք. 2. կարգի 175 Ֆրանք. Տեղեկութեանց համար դիմել Գործակալին Թօփ Հանէ Քարաֆի վրայ։ 516 Թ. ՌԸՊՈՒԼ

ՖՐԵՏ. ԼԷՎԼԱՅԵ ԵՒ ԸՆԿ.

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվերպուլէ և Անվերսէ Միջեւ բեռնակիր շոգենաւեր

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Վիրջօրիան	10500	Ֆլավիան	3500
Ասմէնեան	10500	Էճիբշիըն	3500
Քէսդրիան	10500	Աըրժ.ըն	3000
Լանքասդրիան	9000	Ալճէրիան	2500
Ֆիլատէլֆիա	9000	Արապիան	3500
Գօլօմպիան	8000	Աթէնիան	2500
Ճօրճիան	8000	Անտալուզիան	2500
Փոսդոնիան	8000	Ալգաշիըն	2500
Ֆիրճինիան	8000	Լէսպիան	2000
Ֆալէրնիան	3700	Մինճօ	900
Վավօնիան	3700	Օրօրդօ	800
Ֆլամինիան	3700	Լիսպօն	800
Ֆապիան	3500		

Ապրանքի տէրերէն կը խնդրուի իրենց ապրանքն այլուր փոխադրելու կամ Ղալաթիոյ մաքսատունը հանելու համար իրենց հրահանգը ղրկել շոգենաւուն ժամանումէն 24 ժամ առաջ։

Աւելի տեղեկութեանց համար դիմել առ. ԷՏՎԱՐ ԼԱՖՈՆԴԷՆ

Ղալաթիա, քարափին վրայ
600 հին տեղը մաքսատան

ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԼԱՌՈՒՍ

Ամէնէն կատարեալը, ամէնէն նորը, լաւագոյնը, եւ բոլոր Ֆրանսական հանրագիտարաններուն ամէնէն լաւ պատկերազարդուածը։

Նոր պատկերազարդ Լառուսը որ Ֆրանսայի մէջ խիստ մեծ յաջողութիւն մը ունեցած է, նպատակ ունի գոհացում տալ անձերուն, որոնք կը փափաքին ունենալ փոքր թուով հատորներով, լուրջ կատարեալ և իրականարար նոր հանրագիտակ բառարան մը։ Ականաւոր գրագէտներէ և գիտուններէ շարադրուած, նկատի առած է գիտութեանց և հմտութեան ամէնէն վերջին հիմնական մարդկային գիտութեանց ամէն ճիւղերուն մէջ։ Միանգամայն կը պարունակէ բազմաթիւ պատկերներ ամենամեծ խնամքով պատրաստուած (նշանաւոր անձերու, արուեստի և հոյակապ շինուածներու, տարազներու և թիերու, երկրաչափական պատկերներ, կենդանիներու և տունկերու, սեւ և գունաւոր աշխարհագրական քարտէսներ)։

Նոր պատկերազարդ Լառուսը 16 երեսնոց, իւրաքանչիւրը 50 սանթիմի տետրերով կը հրատարակուի, և 1897 Ապրիլ 1էն ի շաբթէ շաբաթ լոյս կը տեսնէ։ Առ նուազն 400 տետր պիտի ըլլայ, որոնք 7 հատոր պիտի կազմեն. բաժանորդները կրնան եթէ նախամեծար համարին, գործը ընդունիլ 10 տետրէ բաղկացեալ անկազմ սեռիներով, անկազմ կամ կազմուած հատորներով իրենց հրատարակութենէն վերջ։ Առաջին երեք հատորները արդէն ծախու են։

Պայմանաւոր բաժանորդագինը հետեւեալն է.
- 180 Ֆրանք առանձին տետրերով կամ սեռիներով եւ կամ Ծղծակազմ հատոր
- 215 Ֆրանք կազմուած հատորով, (demi chagrin), կարմիր, սեւ կամ կանաչ

Վճարումը կ'ըլլայ (Բարիզի վրայ մանդաներով) չորս անգամէն, իւրաքանչիւրը հաւասար, այսինքն վեց ամիսը անգամ մը, պայմանաւ որ առաջին վճարումը ըլլայ ստորագրուած օրը։

Պայմանաւոր բաժանորդագրութեան գրուելով, ստորագրուողը զերծ կը մնայ ապագայ գինի բարձրացումներէ, նոյն իսկ եթէ աւելի պրակներ ալ հրատարակուելու ըլլան։ 587

ԳՐԱՏՈՒՆ ԼԱՌՈՒՍ, Բարիզ, Մոնբառնաս փողոց, թիւ 17։ Խնդրողին 16 երեսնոց պրակ մը՝ իբր նմոյշ պիտի ղրկուի ձրիաբար

COMPAGNIE ROSSIA D'ASSURANCES

ՌՕՍԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20ի կայս. Իրատէով արտօնեալ Ընկերութեան կեդրոնատեղին Բեթերպուրկ Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37 Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ. — ԿԵԱՆՔ. — ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՐԿԱԾՔ.

Երաշխաւորութեան գումար	121,765,333
1898ի հասոյթք	34,775,462
1881 էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ՝	164,172,000

Ընկերութեան քննիչ ի Կ. Պոլիս
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ

Ղալաթիա, Քարաքէօյ վրայ
(Էին Իւնիւն Մուստաքեան)

Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար
ԹԷՕՏՕՐ ԲԷՔՔԷՆ 5

ԱՆԱՏՕԼՈՒԻ ՕՍՄ. ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթեւեկութիւն կառախումբերու 1900 Ապրիլ 22 (Ն. Տ.) կիրակիէն սկսեալ

ԷՍԿԻ-ՇԷՀԻՐ ԳՕՆԵԱՅԻ ԳԻԾ

ԵՐԹ Կառք Թ. 222 խառն Առտու ժ.	վ.		ԿԱՅԱՐԱՆ		ԴՐՁ Կառք Թ. 221 խառն Իրկն. ժ.	վ.
10	25	մկն.	Էսկի-Շէհիր	ժմ.	1	25
11	7	»	Կէօքճէ քըլըք	»	12	45
12	5	»	Սապօնճը բունար	»	12	3
12	59	»	Ալաեունտ	»	11	7
1	41	»	Չէքիւրլէր	»	10	24
2	37	»	Տէօյէր	»	9	32
3	6	»	Ինասնիյէ	»	8	50
3	30	»	Համամ	»	8	23
3	44	»	Կազլիկէօլ համամ	»	8	14
4	31	»	Աֆիոն Գարա Հիսար	»	7	43
5	11	»	Պէօյիւք Չօպանլար	»	6	50
6	4	»	Չայ	»	6	3
6	53	»	Իսհագլու	»	5	12
7	17	»	Եասսիան	»	4	45
7	46	»	Աք շէհիր	»	4	23
8	18	»	Ազարի քէօյ	»	3	45
9	—	»	Չավուշճը քէօյ	»	3	7
9	38	»	Իլկին	»	2	35
10	25	»	Գատըն-Խանը	»	1	43
11	18	»	Սէրայ-Ինի	»	1	1
11	50	»	Մէյտան	»	12	23
12	52	»	Բունար-Պաշը	»	11	18
1	30	ժմ.	Գօնեա	մկն.	10	30
իրկն.					առտ.	

ՀԱՅՏԱՐ ՓԱՇԱ ԷՍԿԻ-ՇԷՀԻՐԻ ԳԻԾ

ԵՐԹ ԿԱՌԱԽՈՒՄԲ Թ. 34 խառն Առտու ժ.	վ.	Թ. 36 խառն Իրկն. ժ.	վ.		ԿԱՅԱՐԱՆ		ԴԱՐՁ ԿԱՌԱԽՈՒՄԲ Թ. 31 խառն Առտու ժ.	վ.	Թ. 33 խառն Իրկն. ժ.	վ.
10	55	7	35	մկն.	Բարաքէօյ Կամուրջ	ժմ.	3	50	11	30
11	20	8	—	ժմ.	Հայտար Փաշա	մկն.	3	25	11	5
11	45	8	17	մկն.		ժմ.	3	13	10	50
12	52	9	30	ժմ.	Բէնտիք	մկն.	1	58	9	34
1	—	9	38	մկն.		ժմ.	1	50	9	24
1	26	10	5	»	Թուզլա	»	1	27	9	2
1	49	10	34	»	Կէյպզէ	»	1	4	8	42
2	13	11	—	»	Տիլ Իսքէլէսի	»	12	29	8	9
2	24	11	13	»	Թավշանճըլ	»	12	17	7	59
2	43	11	34	»	Հէրէքէ	»	12	5	7	47
3	4	12	—	»	Եարըմճա	»	11	32	7	20
3	18	12	17	»	Թիւթիւն Չիֆթլիք	»	11	14	7	5
3	29	12	30	»	Տէրինճէ	»	11	3	6	56
3	43	12	48	ժմ.	Իզմիտ	մկն.	10	45	6	40
4	5	—	—	մկն.		ժմ.	—	—	6	18
4	42			»	Պէօյիւք Տէրպէնտ	»			5	42
5	14			»	Սափանճա	»			5	12
5	41			»	Ատա Բազար	»			4	54
6	28			»	Կէյվէ	»			3	58
6	54			»	Աք Հիսար	»			3	32
7	29			»	Մէքէճէ	»			3	3
7	59			»	Լէֆքէ	»			2	29
8	37			»	Վէզիր Խան	»			1	51
9	20			ժմ.	Պիլէճիք	մկն.			1	11
9	35			մկն.		ժմ.			1	—
10	45			»	Քարաքէօյ	»			12	10
11	29			»	Պօզէիւք	»			11	34
12	22			»	Ին Էօնիւ	»			10	57
12	54			»	Չուքուր Հիսար	»			10	24
1	35			ժմ.	Էսկի Շէհր	մկն.			9	45
իրկն.									առտ.	

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ
Վեհափառ Սուլթանին
Կայսերական Իրատէով

Որ կը կրէ 2/14 Օգոստ. 1892 թուականը
(30 Սէֆէր 1310)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Հրդեհի, արկածներու, փոխադրութեանց եւ կեանքի վրայ

Ընկերութեան կեդրոնատեղին կա ՈՒԼԻՍ Նէնի խան, Քարաքէօյ Ղալաթիա

Գործակալ, Ղալաթիոյ մէջ
Պ. Ալպէր Սիմբնս
Ցակոբեան խան, Վօյվօտա փողոց
Թիւ 67

Գործակալ, Պոլսոյ կողմը
Յով. Պօնքայի մասնաճիւղը
Եէնի ճամի հավլուսը փողոց,
Յով. Նամիկեան դէմը

Դեր-գործակալ Պոլսոյ կողմը Պ. Ի. Զատօխ
Մարքուճճըլար, Զաբըըը խան, Թիւ 21 194

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ընդմէջ Հըլէ, Կ. Պոլսոյ և Օդեսայի

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ալպանօ	1069	Դօմօ	1497	Կօզօ	1011	Մալմօ	724	Րօզարիօ	186
Ալէքթօ	3607	Դօնկօ	2906	Կրօտնօ	1695	Մարէնկօ	2273	Սաֆօ	1113
Անճէլօ	1541	Դորսօ	895	Հիրօ	775	Մարդէլլօ	3709	Ցիբիօ	1735
Արիօսգօ	2377	Տիտօ	4311	Հիտալկօ	1581	Միքատօ	3557	Սիլվիօ	1193
Պասանօ	1822	Տօմինօ	937	Հինտու	3720	Միլօ	1057	Սպէրօ	1200
Պօրօտինօ	1264	Տուրօ	2383	Հօրադիօ	3600	Մօնդէպէլլօ	1735	Թասսօ	1328
Պրավօ	1076	Տրաքօ	1713	Հումպէր	595	Մուրիլլօ	2419	Թ. Ուիլսըն	1546
Պրիւնօ	841	Տինամօ	504	Իակօ	2354	Նէրօ	1083	Թօբիօ	3827
Պըֆֆալօ	4431	Էպրօ	2464	Իտալիօ	5540	Օթիօ	4100	Թօլէտօ	1470
Գէյրօ	1671	Էլտօրատօ	1520	Ճիւնօ	1080	Օնթարիօ	4036	Թօրքուատօ	487
Գալիպսօ	1337	Էրազօ	1841	Քլէօ	1053	Օրլանտօ	1535	Ուրպինօ	2429
Գամէօ	1244	Ֆիտօ	954	Քօլբինօ	2307	Բալէրմօ	1637	Վասքօ	1914
Գազօ	1094	Ֆինլանտ	1828	Քօմնօ	1700	Բօյօ	510	Վօլօ	1289
Չիրակօ	2729	Ֆլամինկօ	849	Լէօ	1053	Րիալթօ	2229	Վօլթուրնօ	2396
Սիսէրօ	1834	Ֆրանչիսքօ	4582	Լէքանդօ	2272	Րինալտօ	1663	Եէտօ	1850
Գիօ	2697	Կալիլէօ	3060	Լիվօրնօ	1643	Րօլլօ	1613	Զէրօ	1200
Գօլօրատօ	4235	Կիդանօ	1243	Լօրէնզօ	3191	Րոմէօ	1789		

Տուրօ շոգենաւը, նաւապետ Նիլ, ընդհանուր վաճառքով այժմ կը բեռնէ որ ի Հըլ և ամսոյս 13էն պիտի մեկնի ուղղակի Պոլիս գալու համար։

Դիմել առ գործակալս Ֆ. ՀԻԼՏ ԷՆՏ ՐԻՋՕ
Թիւ 23—24, Քիւչիւք Միւլէթ խան, Ղալաթիա 377

COMP RUSS
NAVIGATION A VAPEUR ET D
COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒ
ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ

Շաբթական երթեւեկութիւն

- Գշ. 18 31 Օտէսա ժամը 4էն յետ միջօրէ
- Դշ. 19 1 Իզմիր, Բիրէ, Աղեքսանդրիա 10ին միջօրէէն առաջ (Տրապիզոն լով Աղեքսանդրիա, Բարա-Մէր ֆա, Պէյրութ եւ Քիպր)։
- Եշ. 20 2 Օտէսա ժամը 10ին միջօրէէն
- Եշ. 20,2 Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Կիրասոն, Տրապիզոն, Բաթում ժամը 1ին յետ միջօրէ
- Ուր 21/3 Օտէսա ժամը 4ին յետ միջօրէ

ՔԻՒՆԱՐՏ CUNARD

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻ

Որ ամիսը երկու անգամ կը բանի Լիվերպուլ
Ամերիկայի միջեւ

Անուանք	Թօնօ	Անուանք
Ումպրիա	7718	Փոննիա
Էդրուրիա	7718	Սամարիա
Սէրվիա	7391	Մարաթօն
Ուլտոնիա	7268	Ալպաս
Բավոնիա	5587	Սարակոսա
Սէֆալոնիա	5517	Թարիֆա
Կալլիա	4809	Բալմիրա
Սիթիա	4557	Թրինիտատ
Ալէրրօ	2143	Մորոզզօ
Քէտար	1876	Քամպանիա
Շէրպուրկ	1614	Լուքանիա
Գադալոնիա	4845	

Դիմել առ ՃՕԼԻ և ՍԻԿԸՐ
Joly et Seager
Մէյմանէճի խան, Թիւ 6, 7, 8, Ղալաթիա, Քարա Մուսթաֆա փողոց 255

Արտօնատէր ԶԱՐԵՀ ԽՐԻՄԵԱՆ